Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԼՈՒՍԱՊԱՏԿԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ

ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

www.freebooks.do.am

ԵՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru



Վահագն Դավթյան

www.freebooks.do.am

www.freebooks.am

panarmenian freebooks library



«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ԵՐԵՎԱՆ 1988


Տպագր

ԳՄԴ 8441
Խ 288

Աշխատասիրությամբ
Ա. Դոլուխանյանի

Խաչատուր Կեչառեցի

Խ 288 Տաղեր, Խաչատուր Կեչառեցի, (Աշխատասիրությամբ Ա. Դոլուխանյանի.—. Սովետ գրող, 1988 — 120 էջ. («Հայ քնարերգություն» մատենաշար).

Ժողովածուն ընդգրկում է 13—14-րդ դարերի նշանավոր տաղերգու Խաչատուր Կեչառեցու բանաստեղծությունները որպես հավելված ներկայացված են Ալեքսանդրի պատմության համար գրված չորս բարառնությունները, «Վասն գալստեան աստուծոյ առ մարդիկ» երկը, ինչպես նաև Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի դիմաց ս. Կաթողիկէին» քերթվածը։

Խ 4702080102 (4)
705 (01) 88—88

ԳՄԴ 8441

ISBN 5-550-00007-5

© «Սովետական գրող» հրատարակչություն կազմելու, առաջաբանի, ծանոթագրությունների, ձևավորման համար, 1988

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՌԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան քնարերգությունը մարդկային գեղարվեստական մտածողության խիստ ուշագրավ դրսևորումներից է Խաչատուր Կեչառեցու կյանքի պատմությունը, ինչպես հայ միջնադարյան շատ մտածողների, մեզ է ավանդվել սակավաթիվ փաստերով Բանասեր Մ. Ավդալբեգյանը, հենվելով նախորդ դիջանի ուսումնասիրողների՝ Ա Չոպանյանի, Տիրայր եպիսկոպոսի, Գ. Հովսեփյանի ընձեռած ենթադրությունների վրա, հաչատուր Կեչառեցու ծննդյան ու մահվան թվերը սահմանել է 1260—1330 թթ

Խաչատուր Կեչառեցին եղել է այժմյան Ծաղկաձորում գտնվող Կեչառիսի վանքի վարդապետ, թերևս նաև ուսուցչապետ՝ իր անվանումը ստացել է վանքից Կեչառիսի վանքը հռչակված էր միջնադարում իբրև կրթական կենտրոն Թովմա Վանանդեցին իր բանաստեղծական ներբողում այն անվանում է մի լուսավոր ջահ հայ ժողովրդի համար

---

1 Այս գրքում զետեղված Խաչատուր Կեչառեցու քերթվածների բնագրերը, մասամբ փոխելով կետադրությունը, վերցրել ենք Մ Ավդալբեգյանի պատրաստած քննական բնագրերից Տես, Մ. Ավդալբեգյան, Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958։

Ինչպես նշել է Ղևոնդ Ալիշանը, Խաչատուր Կեչառեցին սկսած է սերած լինի Պռոշյան իշխանական տոհմից, սրանք էլ իրենց հերթին ծագում են Խաղբակյան գերդաստանից, վերջինս իր ծնունդով կապվում է Ամարայրի հերոսամարտի գլխավոր դեմքի ապգային հերոս Վարդան Մամիկոնյանի հետ։

Բանաստեղծ գրիչ, մանրանկարիչ, հմուտ մանկավարժ և հասարակական գործիչ Խաչատուր Կեչառեցին անմիջականորեն կապված է եղել Տաթևի և Գլաձորի համալսարանի կրթական միջավայրի հետ

Խաչատուր Կեչառեցին գործուն մասնակցություն է ունեցել իր ժամանակաշրջանի ապգապահպանման նպատակով ծավալված շարժումներին Դավանաբանական կռիվները, հայ եկեղեցու ինքնության պաշտպանությունը, կաթոլիկության և Հռոմի պապի ոտնձգությունները հայոց եկեղեցու դեմ հրատապ խնդիրներ էին բանաստեղծի ապրած օրերին 1295 թ պապական Հռոմի ունիթորական հարձակումները կանխելու համար Սյունիքի մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը ժողով է հրավիրում, ուր Հայաստանի նշանավոր իշխանները, գիտնականներն ու ապդեցիկ հոգևորականներն ընդունում են մի «Թուղթ» և ուղարկում Կիլիկիայի Գրիգորիս Անավարկեցի կաթուղիկոսին, որը լատինադավան շարժման համակրողներից էր

Այս կարևորագույն փաստաթղթի տակ ի թիվս նշանավոր մարդկանց՝ Եսայի Նչեցու, Իվան և Տարսայիճ Օրբելյանների որդիներ՝ Էլիկումի և Լիպարիտի, Պռոշ իշխանի որդիներ՝ Պապաքի և Էաչու և այլ երևելիների, տեսնում ենք նաև Խաչատուր Կեչառեցու ստորագրությունը «Ես Խաչատուր վարդապետս Կեչառեցի վկայ եմ ասմ դաւանութեան» Հարենասիրական մղումները նրան ուղեկցել են մինչև կյանքի վերջը Դրա առհավատչյան է նաև 1299 ին նրա պատվերով գրված

Ստեփանոս Օրբելյանի հայտնի ողբը՝ «Ողբք և հառաչանք ի դիմաց մերոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի» «Ողբի» վերջում և հիշատակարանում հատուկ ձևով շեշտվում է պատվիրատուի անունը «Արարեալ տեառն Ստեփանոսի նախագահ Մետրոպոլիտին Սիւնեաց՝ որդւոյ Տարսայիճ իշխանին, ի խնդրոյ ջնորհագարդ սուրբ վարդապետին Խաչատրոյ Կեչառեցւոյ, ի ՉԽԸ (1299) թուականիս մերոյ»

Ստեփանոս Օրբելյանի ողբը ոչ միայն հորինվել է Խաչատուր Կեչառեցու պատվերով, այլ ինչպես Մ Աբեղյանն է ենթադրում, գուցե ստեղծվել է նրա հետ խորհրդակցությամբ «Ողբից» բխող գաղափարախոսությունը լիովին պատշաճում է այդ երկու նշանավոր գործիչների քաղաքական դիրքորոշմանը Հեշտ նկատելի է, որ Ստեփանոս Օրբելյանի ողբը կրում է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի ազդեցությունը, ոչ միայն մտահղացմամբ, այլև պոետիկական առանձնահատկություններով Ստեփանոս Օրբելյանի ողբում գգալի են Աստվածաշնչի, «Երգ երգոցի» ազդեցությունները ևս Թեպետ պոեմում դիմառնաբար խոսում է Էջմիածնի կաթուղիկե եկեղեցին որպես որդեկորույս մայր, սակայն հոգևոր գաղափարները երկրորդ պլան են մղված առաջնայինը Հայաստանի քաղաքական անկախության ձգտումն է Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է Արշակունի հայ թագավորներին, Բագրատունիներին, Արծրունիներին, Սյունիքի Բաղաց թագավորությունը Հատկապես արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Բագրատունիների մասին, նշում այդ թագավորների ընդարձակ տիրույթները, ավաղում Բագրատունի վերջին թագավոր Գագիկ Երկրորդի գահընկեց լինելը, ցավով է հիշում հայոց Բագրատունի թագավորության կողքին Արծրունիների հակաթոռ թագավորության պատմական փաստը և այն դիտում որպես

ազգային միասնության «ճեղքում». Ստեփանոս Օրբելյանի ողբը պատգամում է հայ ժողովրդի միասնությունը բուն հայրենիքում Հայաստանում Սա մի մտայնություն է, որ Սարկավագ Իմաստասերից սկսած տարբեր դրսևորումներով հանդես է գալիս հայ մատենագրության մեջ

Ստեփանոս Օրբելյանի ողբն ավարտվում է լավատեսորեն հեղինակը գուշակում է Հայաստանի նորոգվող քաղաքական կյանքը, հավատացած է, որ վերականգնվելու է հայոց թագավորական աթոռը, և նոր օրերի կյանքը գերապանցելու է նախորդ ժամանակներին Խաչատուր Կեչառեցին մեծ սեր ուներ դեպի հնագույն առասպելաբանությունն ու դիցաբանությունը, հատկապես հայորդակից էր հելլենական մշակույթին և պատմությանը Իր քերթվածներում նա շարունակում է հայ քնարերգության դասական ավանդները Հորինել է ողբ, տաղեր, գանձեր Նրա գրական ժառանգության ամենաուշագրավ էջերից է Սուտ Կալիսթենեսին վերագրված Ալեքսանդրի պատմության լուրօրինակ մշակումն ու գեղարվեստորեն հարստացումը Այդ պատմության համար նա գրել է նախաբան և վերջաբան, բարառնություններ, հորինել պատմության որոշակի հատված ները եղրափակող կաֆաներ, որոնք գրված են ժամանակի խոսակցական լեզվով, մատչելի շարադրանքով, անպայմանորեն հարստացնելով պատմության հայկական տարբերակը· Արշակ Չոպանյանը La Roseraie d'Arménie» («Հայաստանի վարդաստանը») ժողովածուի մեջ գտնում է, որ այդ կաֆաների ցգալի քանակությունը «շատ գեղեցիկ են և մի քանիսը հասնում են բանաստեղծական կատարելության)[2]

---

[2] La Roseraie d'Armenie, t 2, Paris, 1923, p 66

Ինչպես նկատված է բանասիրության մեջ, Խաչատուր Կեստացու դիմումը Ալեքսանդրի պատմությանը պայմանավորվել է նոր աշխարհայեցողության ապրեցությամբ, քրիստոնեական ոգու կողքին հեթանոսական լավագույն ավանդների յուրացմամբ, դեպի աշխարհիկ կյանքն ունեցած նոր դիրքորոշմամբ քաղաքական առաջադեմ մղումների որոշակի արտահայտությամբ Բանաստեղծը գործել է մոնղոլ թաթարական արշավանքների ժամանակ և խորապես ապրել է իր ժողովրդի ճակատագրով Արտաքին նվաճողներին ուղղված ընդդիմադիր ուժը տևել է հայ ժողովրդի քաղաքական անկախության մեջ և իր երազանքների իրականացման իդեալ հերոսը դարձել է Ալեքսանդր Մեծը հեթանոսական ժամանակների մի նշանավոր դեմք, որի կերպարը ողջ միջնադարում մնացել էր տարբեր ժողովուրդների հիշողության մեջ, իր մեջ մարմնավորելով հզոր տիրակալի լեգենդար գծերը Ալեքսանդրի պատմությունը հայերեն թարգմանվել է դեռևս 5 րդ դարում, երբ մեր հները մեծ բոպան տառերով արագորեն հայերենի վերածեցին հին քաղաքակրթության արժեքները, իմաստուն ձևով նրանցում տեսնելով ապագային հարուստ գրականություն ունենալու կարևորագույն նախապայմաններից մեկը Ալեքսանդրի պատմության թարգմանությունը բանասիրությունը վերագրել է Մովսես Խորենացուն վերջինս իր «Հայոց պատմության» մեջ հպարտությամբ է խոսում հայ քաջարի ցեղապետների ու թագավորների մասին, հատկապես Տիգրան Երվանդյանի Պատմահոր նման դիրքորոշումը նույնպես պայմանավորված է 5 րդ դարի Հայաստանի քաղաքական աննպաստ դրությամբ և թելադրված ապագային ապատագրական մղումներով Այս մտայնությունը ամենաբարձր շարունակում է իր կենսական նշանակությունը հետագա դարերում և հանդես գալիս տարբեր դրսևորումներով.

Դրա արտահայտություններից մեկն է նաև Խաչատուր Կեչառեցու Ալեքսանդրի պատմության մատուցման նոր տարբերակը Բանաստեղծը նախադրության մեջ պարզաբանում է Ալեքսանդրի պատմությանն անդրադառնալու նպատակը, նշելով, որ այդ պատմությունը «լուացուտ լուրինակ ամենայն թագաւորաց և իշխանաց», որովհետև նա Ալեքսանդրի մեջ տեսնում է առաքինությունը, արդարադատությունը, իմաստությունն ու լուսավորությունը հովանավորող պետական գործչի կատարելատիպ

Բանաստեղծը փորձել է Ալեքսանդր Մակեդոնացու կերպարը հարմարեցնել միջնադարի քրիստոնեական ժամանակներին և այդ նպատակով բոնապբոս ձևով զուգահեռներ է անցկացրել Ալեքսանդրի և Քրիստոսի կյանքի ու գործունեության գլխավոր դեպքերի միջև Ինչպես Մ Աբեղյանն է բնորոշում, այդ համեմատությունների մեջ երևան է եկել միջնադարյան սխոլաստիկ մտածողությունը, սակայն միաժամանակ նաև նույն սխոլաստիկ մտածողությունն ունեցող վարդապետի ապատախոհությունը, Պլատոնի և ուրիշ հույն փիլիսոփաների գործերին քաջատեղյակ լինելը «Այսպիսի ապատամտությունն, ուրեմն, լոկ անհատական չէր, այլ հատուկ էր եղել որոշ մտավորական խավի»[3]

Ալեքսանդրի պատմության ուշագրավ մշակումով Խաչատուր Կեչառեցին յուրովի իրականացնում է մշակութային առաջընթացի այն կապը, որը ձգվում է հեթանոսական և քրիստոնեական ժամանակների միջև, վերստին հավաստելով այն ճշմարտությունը, թե մարդկային մտքի նվաճումները միշտ էլ հենվել են նախորդ ժամանակների ձեռքբերումների վրա Ալեքսանդրի պատմության գրական այս մշակումը սկիզբ դարձավ հետագա

3 Մ. Աբեղյան, Երկեր, հ Դ, Երևան, 1970, էջ 278։

հատանման մշակումների, որոնք իրականացրին բանաստեղծներ Գրիգորիս Աղթամարցին, Զաքարիա Գնունյանցը, Հովսեփ Սեբաստացին

Բանաստեղծի գրական ժառանգության ուշադիր քննությունը ներկայացնում է նրա ստեղծագործության սերտ կապը ապրած դարաշրջանի հետ Նրա հայրենասիրական տրամադրությունները ամբողջովին դրսևորվում են «Ողբ վասն աւերման տանս Արևելեան» քերթվածում, որը գաղափարական հագեցվածությամբ հայ միջնադարյան հայրենապիրական քնարերգության լավագույն նմուշներից է Գրողը ծանոթ է հայ գրականության մեջ եղած ողբերի ավանդական հոգեբանությանը, որ արդյունք էր օտարներից նվաճված հայ ժողովրդի անմխիթար վիճակի Նա անդրադառնում է իր ժամանակի հրատապ հարցերին, քննում է հայ ժողովրդի համար բախտորոշ իրադարձություններ, դեպքեր, ողբում, որ հայերը զրկվել են իշխանական դասից և նրա սերունդներից

Մեռաւ իշխանքն մեր ցաւկալի
Ի իւրեանց որդիքն ի տղայ հասակի..

Նա ջերմորեն է խոսում մոնղոլների դեմ ապստամբած նախարարների և այդ պատճառով դաժանորեն գլխատված վրաց Դեմետրե թագավորի մասին Բանաստեղծի իղեալը Պռոշ իշխանն էր իր որդիներով, որոնց հետ էլ կարելի էր կապել հայրենի երկրի փրկության գաղափարը

Զպարոն Պռօշըն զարդ ինձելի,
Որ զերկաթի դուռն առնէր փոշի.
Աջու բազուկ էր Նոր Սիոնի,
Հիմըն հաստատ հայոց հավատի։

Ողբում հիշում է նաև ուրիշ հայ իշխանների, որոնք, ավաղ, արդեն վախճանվել են և ժողովրդին թողել անհուսության մեջ Ողբը պատմական տեսակետից արժեքավոր փաստեր է պարունակում 14-րդ դարի երկրորդ կեսի հայ իշխանական դպրի նշանավոր ներկայացուցիչների մասին

Խաչատուր Կեչառեցին իր բանաստեղծություններում քննել է կյանքի ու մահվան, հոգու և մարմնի փոխհարաբերության խնդիրներ, ինքնատիպ բանաստեղծական լուծումներ տվել մարդուն հավերժապես հուզող այս հարցերին Միջնադարի մյուս հումանիստ բանաստեղծների նման նա էլ պատգամում է մարդկանց մահվանից հետո թողնել բարի անուն, բարի գործ, խորհել վերջին դատաստանի հետ կապված անհայտության մասին Միջնադարի մարդուն հուզող այս տվայտանքները, մարդկային մեղքի ծանրության գիտակցումը բանաստեղծական ուշագրավ դրսևորում է ստացել «Ես եմ կորուսեալ ոչխար» սկսվածքով քերթվածում, ուր երևում է Մաշտոցյան ապաշխարության շարականների ազդեցությունը Դիմելով աստծուն, բանաստեղծը բողոքում է կյանքի դժվարություններից մարդն ուզում է իրական կյանքում ապրել շահեկան ձևով, սակայն կյանքի վերջում իրեն զգում է կողոպտված

Մի շարք բանաստեղծություններում նա հավատացնում է աստծուն, որ անհնար է ապրել, անտեսելով իրական կյանքը Բացառվում է, որ երկուստեք՝ և՛ մարդ, և՛ աստված իրավացի լինեն աստված և մարդ հարաբերության մեջ մարդը միշտ տուժում է, վերջինս գիտակցում է իր մեղավոր լինելը, որով հետև միշտ էլ «խաբած է յաոօրէիս» Կյանքը բանաստեղծի համար վաղանցուկ երազ է, և մարդը այդ կարճատև կյանքում, որ նման է « ձիւնի, որ ի գալ գարնան կու հալի», շատերից է

խոցվում, թերևս ինքն էլ խոցում է ումանց. «Ճատող ես կըրակ ղըրի».

Խաչատուր Կեչառեցու որոշ բանաստեղծություններ հայ փիլիսոփայական քնարերգության հետաքրքիր էջերից են: Թեպետ բանաստեղծը շատ տեղերում կրկնում է աստվածաշնչային և ավետարանական մոտիվներ, սակայն հաճախ էլ հոգու և մարմնի, կյանքի և մահվան խնդիրները քննում է քրիստոնեական դոգմատիկ փիլիսոփայությունից անկախ և ազատախոհ ձևով: Նման դեպքերում երևան են գալիս հեղինակի ծանոթությունները պարականոն կրույցներին, հայկական և հունական փիլիսոփայությանը

Նրա «Հոգիս դատախազ լինի մարմնոյս» բանաստեղծությունը հայ քնարերգության մեջ եղած հոգու և մարմնի վիճաբանության ընտիր մի նմուշ է Այս բանաստեղծությունը մեծ աղերսներ ունի 11—12-րդ դարերում ստեղծված Գրիգոր Լուսավորչի տեսիլի հետ և ներկայացնում է բոլորովին նոր մոտահայեցողություն հոգու և մարմնի հարցերի վերաբերյալ· Հոգին դատախազ է դառնում մարդկային մարմնի համար և դատում է նրա մեղքերը Սակայն մարմինն արդարանում է՝ ասելով, որ ինքը ձին է, իսկ հոգին ձիու տերը, և ինքը վարվել է այնպես, ինչպես տերը հրամայել է, ուրեմն հողածին մարմնին չարժե մեղք դնել.

Ես ձի, և դու տէր ձիոյս,
Ես ծառայ, 'ւ իշխան դու գերոյս,
Կամիլըդ քո՝ գործ լինէր ինձ.
Մեղ է՞ր ղըձես հողածնոյս.

Սա արդեն բոլորովին նոր հայացք է մարմինն այստեղ անկաշկանդ պաշտպանում է իր իրավունքները· Ի դեպ, ձիու

և տիրոջ, մարմնի և հոգու նման կուզահեռների հանդիպում ենք հնագույն կրոնական պատկերացումներում, օրինակ, ավետարանական գրականության մեջ, ինչպես նաև ալեքսանդրյան գրականության մեջ թարգմանված բյուզանդացի մատենագիր Փիլիպոս Անապատականի «Հոգեկննական հայելի» գործում

(«Диоптра» Филиппа Пустынника — «Душезрительное зерцало»)

Որոշ ստեղծագործություններում բանաստեղծի պատգամները արտահայտում են ժողովրդական առած ասացվածքներին համարժեք մտային բանաձևումներով, որոնցով նրա քերթվածները կապվում են մի կողմից հայ ժողովրդական բանահյուսության, մյուս կողմից՝ հին աշխարհի իմաստուն մտածողության հետ Հատկանշական է «Այս կեանքս է յերապ նըման և խաբող անկերծ յանդիման» սկսվածքով քերթվածը, որը կարծես ժողովրդական ասացվածքների հավաքածու է Նրանում, օրինակ, կան այսպիսի բանաձևումներ «Գինին չէ բարի, նա ամէն մեղաց բանալի», «Նման այնոր մի լինիր, որ չափէ վքամին ի սարի», «Չկարէ փայտ մնալ ի կրակն, պի գիտես որ շուտ կու այրի», «Ջուրն ու հուրն չեն ընկեր, հակառակ են, եղծանելի» և այլն

Խաչատուր Կեչառեցին կենսասեր բանաստեղծ է այդ պարագան հատկապես երևում է «Եղբարք, ձեզ խրատ մի տամ» սկսվածքով քերթվածում, ուր մեռնողը հրաժեշտ է տալիս հարազատներին, իր որդիներին և խորին թախիծով ողբում է նրանցից հեռանալը Այս բանաստեղծությունը իր համարժեքներն ունի 15 րդ դարի բանաստեղծ Մկրտիչ Նաղաշի ննջեցյալների վրա ասված ողբերում

Խաչատուր Կեչառեցին հայ միջնադարյան գրականության մեջ նորարար է վարդի և բլբուլի այլաբանական սիրավեպի իր

մշակմամբ Վարդի և բլբուլի ալլաբանության առաջին արտահայտիչները դարձան նա և Կոստանդին Երզնկացին, սկիզբ դնելով հայ միջնադարյան գրականության մեջ ավանդաբար շարունակվող մի մոտիվի, որին հետագայում անդրադարձան մեծ թվով բանաստեղծներ՝ Առաքել Բաղիշեցի, Գրիգորիս Աղթամարցի, Զաքարիա Գնունյանց և ուրիշներ Վարդի ու բլբուլի ալլաբանությունն առկա է և՛ արևելյան գրականության մեջ, և եվրոպական: Ինչպես մատնացույց է արել Մ Աբեղյանը, եվրոպական գրականության մեջ այն առաջին անգամ հանդես է եկել 13 րդ դարում, հանձին ֆրանսիական վաղ վերածննդի մի ստվարածավալ ալլաբանական պոեմի, որը կոչվում է «Վարդի սիրավեպ» («Le Roman de la Rose»[4]) Հայ գրականության մեջ մուտք գործած վարդի և բլբուլի սիրավեպը ալլաբանություն սիրող միջնադարի բանաստեղծին հնարավորություն է ընձեռում մարդկային սիրո զգացմունքները ներկայացնել վարդի և բլբուլի միջոցով Բանաստեղծությունն ունի հետևյալ գլխակապը «Ի խաչատուր անմտէ ասացեալ է բանքըս» Սյուժետային կարգացման առումով այն նման է Կոստանդին Երզնկացու և հատկապես Գրիգորիս Աղթամարցու համապատասխան քերթվածներին, հանգամանք, որ հուշում է այդ երեք դեպքերում էլ ժողովրդական աղբյուրից սերած լինելը Թեպետ խաչատուր Կեչառեցին սիրավեպի վերջում միջնադարի ոգով ալլաբանությունը կապում է Հիսուս Քրիստոսի հետ, սակայն բուն սիրավեպը, իրոք, մի տաղ է նվիրված գարնանը և մարդկային սիրուն, որովհետև Գրանում սիրած էակի ապրումները, վարդի և բլբուլի տրամախոսությունը ներկայացված են կենսականորեն ճշմարտացի և ապրու

---

4 Տե՛ս „Le Roman de la Rose', Paris, 1974

Բանաստեղծը գրել է նաև արձակ մի գործ՝ «Վանն գալըստեան մոգուց» պարականոն պրույցը, ուր ներկայացված է Քրիստոսի ծնունդը, մոգերի գալը նախ Եգիպտոս, ապա Բեթհեղեմ՝ Քրիստոսի ծննդավայրը.

Խաչատուր Կեչառեցին ստեղծագործել է թաթար մոնղոլական արշավանքների շրջանում, ինչպես ամեն մի ճշմարիտ բանաստեղծ այրվել է իր ժողովրդի ցավերով և իր քերթվածներում հարապատորեն վերարտադրել ապրած ժամանակաշրջանն ու իր դարաշրջանի ականառու մարդկանց անմոռաց կերպարները.

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՑԱՆ



1 ՈՂԲ ՎԱՍՆ ԱԻԵՐՄԱՆ ՏԱՆՆ ԱՐԵԻԵԼԵԱՆ

Ցայս աճագին աւուրս որ հասաք,
Ժամանակիս, որ պատահեցաք,
Զքաղցր արարիչըն դառնացուցաք,
Զերկիրս արեամբ մեղօք ներկեցաք։
Զմայրն աստուծոյ մեր տրտմեցուցաք,
Զմեր բարեխօսն բարկացուցաք.
Զեկեղեցեաց դրունս փակեցաք,
Զկանոնական գիրըն մոռացաք։
Մեք մեր ձեռօք մեզ դահիճ եղաք.
Հայհոյութեամբ զբերանս մեր լցաք,
Ցանզեղջ չարիքըս շաղախեցաք,
Զաւազանին խորհուրդն ուրացաք.
Ըզկիրակին սուրբ ոչ պահեցաք,

Այլ չար գործովք մեր պատառեցաք,
Զժամն և զաղօթս բնաւին մոռացաք,
Ի պատարագն անգամ չնայեցաք:
Զհովիւ հօտիս մեր բամբասեցաք,
Վարդապետաց հակառակ կացաք,
Զհայր և ըզմայր վիրաւորեցաք,
Զազգ և զազինս ի մէնջ վարեցաք:
Զորթն և զայրին մեք դառնացուցաք
Եւ աղքատաց խոլոռ նայեցաք,
Յօտարըն՝ ւ ի տնանկս ոչ ողորմեցաք,
Դէմ պանդխտաց զդուռըն փակեցաք:
Ծաղր ու նախատ բազմաց մեք եղաք,
Յերկաթ ու ի նեղ զընդան մեք մտաք,
Յաղքատութիւնս, որ ժամանեցաք,
Յաչս մեծ դարիս, որ մեք դիպեցաք՝
Ի ձեռըն չար ազգի գրաւեցաք:
Բժիշկ չունիմք ցաւոցս, որ հասաք,
Հագարացոց ազգէն գերեցաք,
Յանօրինաց ձեռն մատնեցաք,
Արեանարբու զօրաց նեղեցաք՝
Ճաղաթայից սըրէն խոցեցաք.
Խիստ արժանի եղաք՝ զինչ եղաք.
Վասն չարեացն, որ մեք գործեցաք:

Մեռանի իշխանքն մեր ցանկալի
Ի փրեանց որդիքն ի տղայ հասակի,
Սուգըն տիրեաց մեզ Իսրայէլի,
Լաց՝ ւ աղաղակն մեծ Հռաքելի՛:

Սադո՛ւն[2], սիրած մեծ Ապաղաձի[3],
Գոված ընտիր յամէն հաւնդիսի,
Զաչերըդ բա՛ց, զինչ Դամասկոսի[4],
Տե՛ս ըզգաւառս ի յերերմանի,
Զեկեղեցիքս ի մեծ վըտանգի
Ու զքահանայքս ի տարտարոսի,
Զխութլու-բուղայն[5] յարեաւ հալաւի,
Զիւր աննըմանն պատկերն ի հողի:
Զարքայն չիշխեմ յիշել զվրացի՝
Զատլասերեանն ըզԴեմետրէի[6],
Որ դեռ քըրտունքն ի վայր կու հոսի
Սիրտըն քաշած ու դեռ կենդանի:
Զպարոն Պոշըն՝[7] զարդ հեծելի,
Որ զերկաթի դուռն առնէր փոշի.
Աջու բազուկ էր Նոր Սիոնի[8],
Հիմըն հաստատ հայոց հաւատի:
Կամ զիւր որդիքըն զարմանալի,
ԶՄկրէմ[9], զՎասսակ՝[10] զկորիւնք առիւծի,
Զայն զօրաւորն ի պատերազմի՝
ԶՍմիր-Հասան՝[11] բազուկըն քաջի,
ԸզՏարսայիճ[12] զարմըն վեհազգի,
Զեղբայր մեծին, որ Սըմբատ[13] կոչի,
Որ պատուեցաւ ի դուռն արքունի՝
Այնմ, որ աւուրն էր Մանկու ղանի[14]:
Զհասանն յիշեմ ըզխաչենցի,
Որ մանկաւուրն էր Զալալ-Դօլի[15],
Զմիւս Հասանըն՝ զորդի Դօփի[16],
Զհաւատարիմն և զերկիւղալի:

Հանց ուժընդակ էր ինքն յատենի
Քան զՔրիստոսի նշանն ի բեմբի:
Աւա՜ղ, թէ զո՞րն ասեմ ի լալի,
Զայն հին ու նորքն ի գերեզմանի:
Վա՜յ զմընացորդքըս՝ սուտ կենդանի,
Մակա՞ր չէաք ծնեալ յաշխարհի,
Մեք գերեցաք ու խիստ արժանի,
Մեր գերեդարձքըն չեն ի միջի:
Աստուածածի՛ն, սուրբ կոյս Տիրոմի,
Բարեխօսեա՛ որդւոյդ միածնի,
Առցես ընդ քեզ զձայն յանապատի
ԶընՍտեփանոս[17] զծաղիկըն խաչի,
Զլուսաւորիչն հայոց ազգի,
Զբազմաչարչար վրկայն գովելի,
Զիշխանս հայոց ըզքաջ եւ զարի
Որոց այսօր յիշատակ տօնի.

Սոքօք հանդերձ աղաչեա զորդի,
Փըրկել ըզմեզ յազգէն հագարի,
Զթագ եւ զպսակ մեր հայոց ազգի
Բարձր առնելով մինչ յորըն վերջի,
Նըրնջեցելոցն ի հող տապանի
Լըսել ըզձայն՝ Եկայք օրհնեալ[ք] Քրիստոսի:

Ող[որմեա]:

2 ՏԱՂ ԳԱՐՆԱՆ. ՎԱՐԴԻՆ ԵՒ ՊՈՒԼՊՈՒԼԻՆ ԶՐՈՅՑՔ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՔ

Խաչատուր Կեչառեցի վարդապետի ասացեալ

Ի գնալն վարդին եկեալ պուլպուլին,
Որոնելով ըզնա ի բոլոր յայգին,
Յորժամ զնա ոչ եգիտ՝ արտասուէր ուժգին
Եւ զաղաղակ բարձեալ ձայ ողորմագին,

Խանդաղատեալ փարէր նա զայգեգործէն,
Ասէր. «Օրհնեա՛լ լինիս դու ի յարարչէն,
Եթէ տացես ընշան դու գիմոյ վարդէն,
Չի կարօտու նորա մեռանիմ ատտէն»:

Այգեգործըն ընդմա պատասխան առնէ.
«Գիտակ չեմ քո վարդին, տէրն վկա՛յ է,
Բայց ժամանակ գալոյ նորա մերձեալ է,
Չի ծաղկունքն այգոյս ամէնն եկեալ է»:

Չկարէր նա համբերել գալստեան նորին,
Գրեալ թուղթ առաքէ սիրելի վարդին,
Բարեւ ղրկէր նորա կարօտով սրտին,
Փութայր հասանել տեսլեանըն նորին:

Ասէ. «Ի պուլպուլէ թռչնոցըս յետնէ,
Շատ կարօտիւ բարեւ իմ վարդին հասցէ.
Ի քո իսկ յամելուդ սիրտըս կասկածէ,
Վախեմ թէ քեզ անցանք ինչ պատահեալ է:

Տրտում կամ և տխուր ի յայսմ աշխարհիս,
Ալեկոծեալ ծփիմ ի մարմնոյ ևաիս[1].
Կամ տատանեալ ալեօք ի մէջ ծովակիս
Եւ եղեգան նման հողմըն շարժէ զիս:

Որպէս զբու նստեալ եմ յաւերակի,
Հանգոյն հաւալառաւ ի յանապատի,
Միայնացեալ՝ նըման եղէ ճընճըղակի,
Քունն է հատեր յաչացս՝ նման կապկամի:

Ի ծնեալ կամ տատանեալ և չունիմ դադար,
Ըզցայգ և ըզցերեկ որպէս խելագար.
Դու ես հոգոյս հոգի, յիսնէ հեռացար,
Ոտեալ լոյս աչերոյս՝ մնացեր եմ խաւար.

Բամեալ թոչնոցն դասք յերկրի երեւին,
Զըւարճացեալ ցընծան եւ ուրախ լինին,
Զի են իսկ միաբան յիւրեանց երամին,
Ես միայն տարակուսեալ յաշխարհիս միջին.

Այլ առանց քո տեսուդ չեմ ես ապրելու,
Եւ ոչ իսկ դադարի աչերս ի լալու.
Շունչըս հատեալ, հոգիս մնաց քեզ տալու.
Հասի՛ր շուտով, մերձեսցի դուռըն մահու:

Նամակիս արասցես շուտով պատասխան
Եւ ինձ ծանուցանես զժամ քո գալստեան,
Զի կարացից գիտել ի մըտաց քո բան,
Թէ չէ ինձ հասանի շուտով օր մահուան:

Միթէ ինձ խոովեա՞լ ես, զպատճառն ասա,
Որ այսչափ հեռացար ի յերկրի վերայ:
Ծաղկունքն ամենայն այգոյս ելեալ կայ,
Եւ միայն չերեւիս դու ի մէջ նոցա·

Տեսանեմ ըզթռչունս յուրախութեան կան,
Անասունք և գազանք երամով խաղտան,
Լողայինք ծովային և այլ օդականք
Հընճռուեալ զուարճանան և բերկրեալ ցընծան:

Է՛, իմ հոգոյս հոգի՛, վարդըդ ցաւկալի,
Դու ես լոյս աչերոյս և սիւն իմ սրտի.
Զի առանց քո տեսուդ չեմ ես կենդանի,
Հասի՛ր շուտով, միթէ գտնուս կենդանի»:

Առեալ վարդն ըզնամակ նորին ընթերցեալ,
Խմացեալ զբան նորին և յոգոց հանեալ.
Ողորմագին դիմօք արտասուս հարեալ,
Պատասխանի թըղթոյ նորա զայս գրեալ.

«Սիրտս է ի սուգ մտեալ վանց քո կարօտուն,
Հոգոյս հոգի՛, պուլպուլ, պատուական թռչուն.
Իմ շունչ և իմ հոգի 'ւ ի՛մ ուրախութիւն,
Դու ես աչացս լոյս և կենդանութիւն.»

Աւա՜ղ, որ զրկեցայ տեսուդ քաղցրագին
Եւ կամ օտարացեալ յայսմ ճահճագին,
Միայնացեալ եղէ յերամոյս միջին
Եւ կամ տարակուսեալ դառն և լաւագին:

Ցասումըն յարարչէն առ մեզ ազդեցաւ,
Եւ հողմըն հիւսիսոյ ի մեզ դիպեցաւ.
Զըմեռն աստկութեան մեզ պատահեցաւ,
Տերեւս իմ գեղեցիկ յիսկ թափեցաւ:

Եղկելի եմ դարձեր և թշուառական,
Չի ի քէն հեռացայ, թոչո՛ւն պատուական,
Հանգիստ չունիմ բնաւ ի քուն ՚ւ արթնութեան,
Կարծեմ, թէ մերձեցաւ առ իս օր մահուան:

Լաւ է ինձ մեռանել, քան թէ՝ կենդանի,
Չի առանց քո տեսուդ ինձ կեանք չի պիտի,
Ի քո շատ կարօտուդ շունչըս կու քաղի,
Բայց հոգիս քո գալուդ մնայ և նայի:

Է ինձ խնդումն այսօր, որ զձայնըդ լուայ,
Ջինչ որ ի յիմ սրտիս կայր ելամ ու ղուսայ
Գընացաւ այսօր յինէն, և ես դուրացայ,
Եւ քոյին սուրբ տեսուդ արժան զիս արա»:

Բերեալ զնամակ վարդին ետուն պուլպուլին.
Կարդաց և իմացաւ զողջունէ նորին,
Ուրախացեալ ցընծայր ի մէջ պաղչային
Եւ գոհանայր զտեառնէ զնա պարգևողին:

Աւրինէր զաննեղն աստուած քաղցր եղանակով.
Գովէր ըզբանն աստուած նա ձայնիւ երգով,
Բարեբանէր զհոգին աստուած հրճուելով,
Չերրորդութիւնըն սուրբ աճհաս ճառելով:

Նայէր վարդի գալուն ի մայիս ամսոյն.
Փափագէր կարօտով հասանել տեսուն.
Շրջեալ աղաղակէր ի մէջ ծառերուն,
Որոնելով զվարդն ի մէջ թրփերուն:

Քաղցրիկ ձայնիւ երգէր ամառ հրեշտակաց
Աղաչելով հայցէր զտրտողէն բարեաց.
Ասէր՝ «Ինձ ողորմե՛ա, մարդասէր աստուած
Եւ կատարեա՛ զհայցուածս, թագաւո՛ր փառաց»:

Սրբուհի Մարիամ՝ կոյս աստուածածին,
Բարեխոսեա՛, վասն իմ, որդոյդ միածնին,
Պահել ըզմեզ այժմուս և յապագային,
Փրկել ի տանջանաց հրոյն գեհենին:

8 ՈՂԲ ԵՒ ՄԱՂԹԱՆՔ Ի ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՐԵՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ

Ես եմ կորուսեալ ոչխար[1],
Մոլորեալ ի սուրբ քո հօտէն
Հովի՛ւ քաջ, ի վայր հայեաց,
Բարեխօս քեզ երկիր ամէն:

Ըզգիւտ կորընտեան իմոյ
Տեսանել ցանկամ, տէ՛ր, ի քէն,
Զի մի արտաքոյ մնացից
Ի յարկացող քոց լոսեղէն:

Ջքո աստուածային հրամանդ,
Զոր լուայ ի սուրբ քո գրէն,
Թէ բառնամ ի յուս զանկեալն
Եւ խառնիմ ի դասս լուսեղէն:

Սո՛ւ իս կատարեա զհրամանդ,
Զի ծրնունդ եմ յաւազանէն
Տո՛ւր ինձ փրկութեան նշան
Վարդագոյն արեամբդ՝ որ ի քէն:

Տո՛ւր ինձ քնութիւն բարի,
Կակղացո՛ զսիրտ իմ քարեղէն,
Տո՛ւր ինձ արտասուաց վտակ,
Զինչ կաթէ ցօղիկն ի յամպէն.

Գիտեմ, տէ՛ր, քեզ չէ դիժար
Ազատել զհիւանդս ի ցաւէն.
Ես եմ չարաչար հիւանդ,
Իմ կենաց ճարակն է ի քէն·

Հանցգուն զինչ բուսնի տերեւն
Եւ ծաղկի գարունն ի ծառէն,
Տէ՛ր իմ, ծաղկեցո՛ հոգով
Զիս ի վէր քո աստուածեղէն:

Հանցգուն զինչ աշնան քամին,
Որ թափէ զտերեւն ի ծառէն,
Հողմով մեղանաց իմոց
Զրկեցայ յանանց պըսակէն:

Հանցգուն զինչ հանեն մարդիկ
Հնարիւք ըզձուկն ի ծովէն,
Որ սպան մի տղտանըն տայ
Ու մեռնի կարօտ ի ջրէն,

Ես արտաքսեցայ մեղօք
Յիմաստից աւհուն քո ծովէն,
Հոգիս թալկացաւ դէմ քեզ,
Ջիս կեցո՛, ծնեալդ ի կուսէն.

Ինձ մութն ու խաւար տիրեց՝
Յիմ մեղացն ի թանձրութենէն.
Գին եմ քո անպարտ արեանդ,
Փարատեա՛ զխաւարս ի յինէն.

Արեգակն է քո ստեղծուած,
Կու լընու նա զաշխարհիս ամէն,
Դու ես արարիչ լուսոյ,
Մի՛ թողուր կարօտ զիս ի քէն:

Հանցգուն զինչ ելնէ ժամ-ժամ
Թանձրացեալ թուխ ամպն ի ծովէն,
Ի յորոտմանէ նորա
Սասանի ամէն մըսեղէն:

Իմ մեղքն է խաւար կամար՝
Կու բերէ կարկուտ ձրեղէն,
Քանի կու յիշեմ ըզնա
Կու դողայ ոսկերքս իմ ամէն:

Յաշխարհս ի վաճառ եկի
Թէ շահիմ գանձիւք հոգեղէն.
Զար աւազակաց դիպայ,
Թալեցին զինչ մերկ ի մօրէն,

Շատոց օրինակ եղայ
Զարութեամբ բարոյն փոխարէն,
Վախեմ ես ի յայն աւուրն,
Որ համար ուզես դու յինէն.

Չունիմ կենալու ճարակ,
Զէ՛ ինձար ումէք կալ աստէն,
Չունիմ գնալու պաշար
Նեղ ու անորք ճանփուն հրեղէն[2].

Ինձ Եթեմիաս[3] պիտէր՝
Ողբ աւէր ի յիսրայելէն,
Որ բազում ողբով կոծէր
Զմթերումեալս ի չար վիշապէն:

Ահա, տէ՛ր, հասեալ է ժամ
Խորտակմամբ կրծոյս կաւեղէն,
Զաշխարհս բարեխօս ունիմ
Առ ծնեալ աստուածդ ի կուսէն:

Ըզկեչառեցի մոլարս,
Զտարբերեալս ի մեղաց ծովէն՝
Զեղբս տուր ըստ Պետրոսի
Ի ազատեալ ի յընկղմաձէն.

Մի՛ անտես առներ զիս, տէ՛ր,
Մի՛ թողուր փորձիլ ի չարէն,
Դու ես փրկութիւն և կեանք,
Օգնական, յոյս և ապաւէն:

Յորժամ գաս անճառ փառօք
Ի դատել զամէն մահկէն,
Կեցո զմեղօք մեղեալս,
Ի ապրեցո ի հուր գեհենէն:

4 ԽՐԱՏ ՈԳՈՅ ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՐԵՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ

Եղբա՛րք, ձեզ խըրատ մի տամ՝
Մի՛ կենաք դուք շատ խոր ի քուն.
Զարթիք և արթուն կացէք,
Խիստ ի մօտ եմք յօրն ի մահուն:

Աշխարհս է յերազ ընդման,
Զինչ լինի մէկ մ՝ անուշ ի քուն
Եւ ի քուն լինելն ի ներս
Գանձ գըտնու անթիւ և անհուն:

Խընդալուն ցընծայր ի սիրտըն
Եւ ուրախ էր գանձին սիրուն
Եւ հանց համարէր յիւր միտքն,
Թէ՝ լինիմ իշխան մեծատուն:

Երբ որ ի քընոյն զարթեաւ
Եւ տեսաւ՝ որ էր տուտ ի քուն,
Յայնժամ փոշիման դարձաւ
Ի վերայ իւր շատ խընդալուն:

Յորժամ հրամայէ Աստուած,
Ու խընդիր գան մարդուն հոգոյն
Պահիկ մի դադար չի տան,
Որ տեսնու զորդիքն իւր սիրուն:

Զաչերն ողորմուկ ածէ
Ու նայի ի դէմ սիրելնուն,
Ի ճարկէ ճարակ ընկնի
Չի գլտնու հընար զերծանելուն,

Հառաչէ սըրտէն ի վեր
Ու կոչէ զմայր տղակներուն
Ու հանց պատասխան տայ իւրն,
Որ նուաղի ի խեղճ յաւելուն.

«Քո կէս մարմընոյդ եմ ես,
Որ կանցնիմ ի ներքև հողուն,
Զագե՛ր, ձեր ծընօղն եմ ես,
Որ կերթամ, այլ ոչ գամ ի տուն»:

Հիմիկ դուք ձեզ պէտ արէք,
Թողէք զչարն, գնացէք հետ քարուն.
Զարին ատեցող լերուք,
Որ չլինիք բաժին գեհենուն:

Բարեացըն սիրող լերուք,
Գործեցէք 'ի սրէք ձեզ անուն,
Գէմ քան ըզթարթել ական
Մահն ի մօտ է ադամորդուն:

5 ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՌԵՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ Ի ՎԵՐԱՅ ՍՈՒՏ ԱՇԽԱՐՀԻՍ

Այս կեանքս է յերազ նըման և խաբող անզերծ յանդիման,
Բնութիւնս որ հաւաքէ մարդոյս, սատանայ յանդունդս ի զնդան,
Որոց թէ ականջ դընես և ունիս միտըս բանական
Դատաստանին ակն կալ, զի տալոց ես անդ պատասխան:
Ե՛կ, որ օրինակ բերեմ զառաջին մարդիկն, որ անցան
Զինչ գործեցին, զայն տարան՝ թէ բարի կեցան, թէ մեղան.
Եհաս օր մահու նոցա, նա թողին զաշխարհս ու անցան,
Ընդ շատ չարչարանք ի ներս և միայն պատանք թէ տարան:
Թագաւորք այլ շատ կային յԱդամայ զարմիցն, որ ծնան.
Ժամանակն ի հատ երեկ, և մտան ի նեղ գերեզման:
Ոսկի չյագեցան նոքա, մինչ եկաւ գողն արքունական.
Աւէ՛, զբաղած գերի, թէ ոչ դու լինիս փոշիման:
Ուշատո՛ւր, զարթի՛ր ի քնոյ, կատարէ զգործքդ ի լըման.
Ծանի՛ր զարարիչն Աստուած, որ չտանի գեհենն ի հաւան:
Կացեր ի կարիս մարմնոյ, կապեցիր բեռինք ծանրական,
Հոգի՛, թէպէտ շատ զբաղիս՝ մեռանիս պարտօք հայրական.
Զա՛յն տուր և զարթո՛ զքեզ, դու մտօք մարդ ախալական,
Նեկօք հաւատոյ անցիր ընդ ծըփման ծովոյս հոսական,

Ճանապարհ արդար գնալ, որ չտիրէ տանջանք անվախճան,
Մի՛ խաբիր սնոտի սիրով, որ խաւար բերէ հոգեկան։
Ցիմա՛ր, գինին չէ բարի, նա ամէն մեղաց բանալի,
Նման այնոր մի լինիր, ոչ չափէ զքամին ի սարի.
Շատ ապրիլը՛ն չէ պարծանք, պատասխանն իրաւ կու պիտի։
Ու կինն՝ հանէ զմարդն ի փառաց, նման Եւային։
Չկարէ փայտ մնալ ի կրակն, զի գիտես որ շուտ կու այրի,
Պարտք է հեռանալ անտի, որ չլինիս բաժինն գեհենի.
Ջուրն ու հուրն չեն ընկեր, հակառակ են եղծանելի,
Ոտատ և ողորմած լեր դու, որ մեղաց գիրն քո ջնջի.
Սուրբն է Աստուծոյ նման, երանի ով ոք սուրբ լինի՝
Վառի լոյս հոգոյն ճրագն, անամաչ յերկինս ելանի։
Տամ ես քեզ բարի խրատ, թէպէտ եմ ողորմ ու լալի,
Բաբո՛ւն, ողորմած է տէրն, նա չի տայ զմեզ կեր գեհենի,
Ցավօք կու նեղիմ գերիս, թէ լինի դեղ իմ խոցերիս,
Իիւծեալ միջաբեկ սրտիս աղաչեմ զաստուածն ամենիս՝
Փրկէ ի հրոյն զմեզ և չտայ ի հուր գեհենի,
Քաւիչն է փրկիչն Յիսուս, ինքն օրհնեալ փառօք հայրենի։

6 ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՐԵՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ ՏԱՂ ՈԳԵՇԱՀ ԵՒ ՊԻՏԱՆԻ

Թէ մարդ ես ու միտ ունիս,
Ես տամ քեզ խրատ մի քանի.
Դու բա՛ց ընդարմիդ ականջն
Եւ գրէ ի սիրտ 'ւ ի հոգի։

Զաչէրդդ շատ մի աձեր,
Թէ ոչ՝ չար սըրով դայ խոցի.
Զեզուդ արձակ մի թողուր,
Որ չաճէ զքեզ պատուհասի:

Խելոք, իմաստուն խօսից
Թէ ականջ դընեես, իմ հոգի՛,
Նա հանց փառաւոր լինիս,
Որ աշխարհս ամէն հաւանի:

Չխորհուրդդդ չասե՛ս կնոջ,
Եւ չընկնիս մեղիս ՚ւ ի գինի,
Յայնժամ դու շահիս զաստէնս,
Եւ յանդէնն ես երանելի:

Զայն որ քեզ ամօթ թըւի
Եւ աճոկ՝ խիստ մեղադրելի,
Ցանկից հանց պատրաստ կացիր,
Որպէս չար թիւնից վիշապի:

Առ քեզ մի՛ փակեր զաչերդ
Եւ դառնալ սրատես օտարի,
Թէ ոչ՝ հանց ի խոր ընկնիս,
Որ չտեսնուս զլոյսն արևի:

7 [ՀՈԳԻՍ ԴԱՏԱԽԱԶ]

Հոգիս դատախազ լինի մարմնոյս
Ի հեղուկ տալ արտիս,
Թէ՝ է՞ր կուտեցեր զչարիս
Յանցաւոր այս սուտ աշխարհիս·

Կամ է՞ր կորուսեր դու զիս,
Ի աննշէջ կրակ դրիր յիս,
Այն օրն, որ հաշիւ լինի,
Դու այրիս, ՚ւ անզերծ տանջեն զիս:

Մարմնոյս պատուախանն է այս,
Որ ի տալ մըտացս և հոգոյս՝
«Ջիս պարտաւոր է՞ր առնես,
Այդ սուտ է զուր իմ խոցերոյս.

Ես ձի, և դու տէ՞ր ձիոյս[1],
Ես ծառայ, ՚ւ իշխան դու գերոյս,
Կամիլըդ քո՝ գործ լինէր ինձ.
Մեղ է՞ր դընես հողածնոյս»:

8 [ԱՇԽԱՐՀՍ ԷՐ Ի ԾՈՎ ՆԸՄԱՆ]

Աշխարհս էր ի ծով ընման,
Ջիս ի վայր տարաւ յանդիման.
Կենցաղս էր յալեաց ընման,
Ջիս ի մէջ էառ քաւ զընդման:

Սէրն էր անդընդոց ընման,
Ջիս ի վայր քարշեց փոշիման.
Աւուրքս էր ծաղկի ընման,
Որ անցաւ երազի ընման:

Մարմի՛ն, մեռանիլ կայ քեզ
Եւ մընտնուլ ի նեղ գերեզման,
Աչերըդ խըփի, գերի՛,
Ի երեսիդ գոյնըն ճողանան:

Ճօճար բան և բառ լեզուիդ
Այդ ամէնն ի քէն վերանան,
Սնոտի սիրելիքըդ քո
Ջքեզ թողուն ՚ւ ի քէն հեռանան:

9 [Ի ՀՈՐՍ ՏԱՐԵՐԱՑ ԵՐԿՐԻ]

Ի չորս տարերաց երկրի
Հողեղէն մարդ հաստատեցայ,
Կենօքս իմ խաւար վկացի,
Շատ լացի, շատ յորդորեցայ:

Շատոց ես կըրակ դըրի,
Եւ շատոց հըրով վառեցայ,
Հանց անզերծ ցաւի դիպայ,
Որ բընաւ զճարըն չիմացայ.

Հոգի ճրեղէն էի,
Յանփարատ խաւար գընացի,
Բազմաց ցանկալի էի,
Իմ խելօքս եղայ եղկելի:

Անուշ քաղցր աղբիւր էի,
Զիս ի ցեխ մեղաց խառնեցի,
Պայծառ ի վառ աստղ էի,
Յանփարատ խաւար գընացի:

Խաչատո՛ւր, զարթի՛ր ի քնոյ,
Զի քեզ ժամ է աշխարհելի.
Այս կյանքս է նըման ձիւնի,
Որ ի գաղ գարնան կու հալի:

Երազ է, վճար ունի,
Կոստանի ի հուրն, որ այրի,
Յոգոց հա՛ն, մեղայ ասա՛
Եւ կանգնիր, ա՜յ ողորմելի:

10 [ԱՍՏՈՒԱԾ Է ՎԿԱՅ ԲԱՆԻՍ]

Աստուած է վըկայ բանիս,
Զատ պատանքն, այլ իրք չի տանիս.
Ծատ խոց և կսկիծ առնուս,
Քան զվայն, այլ իրք չի շահիս:

Թէպէտ շատ ջանաս, եղբա՛յր,
Քան զշիւարն, այլ իրք չի տանիս,

Ի ձեղ գերեզման մըտնուս
Եւ ասես՝ Վա՜յ զմեզնակ գերիս:

Ծաղկեալ ես, տերև ունիս,
Յայտից այլ շուտով տի թափիս,
Կանգնած ես վայելչ կեցօք՝
Փոխի գոյնդ, և շուտ մեռանիս:

Գալ ձմեռն և ձիւն բերէ,
Անհանդերձ՝ ցրտով ընդաղիս,
Յորժամ որ գարուն լինի,
Մեծ ամօթ կըրես՝ ւ ամաչես:

Ի՞նչ առնեմ ես այս գերիս,
Որ խաբած եմ չառօրէիս.
Ինձ շատ մեղանք մի դընէք,
Չի դիպայ անզերծ վտանգիս:

Հիւանդ եմ, ի տես եկէ՛ք,
Միթէ դեղ առնէք խոցերիս.
Ահ ու դող պատեց զհոգիս,
Պատճառ ի՞նչ դընեմ տանողիս:

11 ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՒԵՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ԿԱՆԱՆՑ

Կանա՛նց ազգ, լացէ՛ք ըզձեզ՝
Դուք էք զէն ի սատանայէ,
Դըստեր էք այն մօրըն ձեր,
Որ եհան ըզհայրն ի դրախտէն:

Քանի շատ չարիք գործէք,
Մահն գայ և զձեզ զընդանէ.
Յետոյ պատասխան ուզեն,
Երբ գեհենն ըզձեզ պաշարէ:

Ոչ մընաց հնար յերկրի,
Որ չդիպաւ ձեզ ի բնութենէ.
Արմատ Կայենի[1] էք դուք,
Որ կորոյս զաշխարհն ի բընէ:

Քոյր Եզաբելի[2] էք դուք,
Որ վարեց զտէտողն ի տանէ.
Դուստր Հերովդէի[3] էք դուք,
Որ խցեց զՁայնն յանապատէ,

Կին մարդոյն պարտ չէ՛ խօսել՝
Ոչ յատեն 'ւ ոչ յեկեղեցի,
Ուր մտնու անոկ բերէ՝
Անամաչ 'ւ անկասկածելի:

Նա տուն չշինէ իսկի,
Բայց քանդէ ողորմ ու լալի,
Ում որ բարեկամ դառնայ՝
Զընդանէ անզերծանելի:

Զինչ դավլ և երդումն ուտէ
Ոչ զմինն ի հուն չի հանէ,
Անկուշտ է կրակի նման,
Զինչ ի յինքն առնու զայն այրէ·

Ծատ կսկիծ ու խոց դընէ՝
Ջհայրենի տունն նա քակէ,
Առնու յաղ աշխարհ տանի,
Եւ անհետ կորուստ նմա բերէ:

12 [ԽԱՉԱՏՈՒՐ, ԱՌՆԵԼ ԼԱՒ Է]

Խաչատո՛ւր, առնել լաւ է,
Քան ասել և ոչ կատարել,
Աղքատ և արդար լաւ է,
Քան գիտուն և յոյժ մոլորել:

Սակաւ գիտութիւն լաւ է,
Քան գիտել և ոչ կատարել,
Մին ձեռօք ,երկինս լաւ է,
Քան երկու ձեռօք դեգերել:

13 [ԵԿԻՆ ԸՆԴ ԻՍ ՀԱՆՑ ԱՍԻՆ]

Եկին ընդ իս հանց ասին,
Թէ՝ Գընաց օրերդ ի ձեռաց.
Զարթի՛ր, շուտով ճա՛ր արա,
Որ չգայ օր չարչարանաց:

Այն, որ աներեկ ասեն,
Երնի փառք բարեգործաց, ,
Եւ անհաւատիցըն կողմն՝
Ի պատիժըն չարչարանաց:

Ո՛վ Կեչառեցի, մեղօք
Անդ չունիս ճար պատճառանաց.
Ի ոչ խաբ տայ լեզուիդ խօսից,
Ի ոչ հընար քեզ ներգործանաց.

Քան յոտք և յաղերս ընկնիլ
Ի ի զղջումըն խոստովանաց,
Որ չանկնիս յալիս խորոց,
Ուր տեղիքն է չար հրեշտակաց:

14 [ԱԽՂ՛Ղ, ԹԷ ՀԱՆՑ ԲԱՆ ԼԻՆԷՐ]

Աւա՛ղ, թէ հանց բան լինէր,
Որ ըզգալ մահուն գիտնայի.
Շուտով ես առ իս գայի
Եւ զաշխարհըս մոռանայի·

Բայց սուտ եմ ես այս գերիս,
Չի համակ պատրաստ կու պիտի.
Գալ մահուն գողին ընդմէն,
Որ յանկարծ ի տունն երևի:

Վա՛յ զիս աներեկ աւուրն,
Ուր ամէն ծնեալ ժողովի
Ի յարքունական հանդէսն,
Երբ աստուած յերկնից խոնարհի,

Ի դատողական յաթոռոցն
Նըստի՝ ի կալն յՈւռնայի,
Եւ գաղտնիք գործոցն յայտնին
Ցանկաշահ մեծ հրապարակին։

15 ՏԱՂ ՈՂԲԱԼԻ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿԵՉԱՒԵՑՈՑ

Ամենալփրկչին կերպին դրոշմեալ պատկերին...
Գաւն ի Գողգոթայ[1] զենեալ ի սուրբ սեղանին,
Դասքըն դողա[յ]ին վերին ինչ տէրն ի խաչին։
Երերէր երկիր ու երկինք ինչ բևեռէին,
Ջէն զինաւորին խոցէր զկող կենարարին,
Էնն յէութեան ընդ հօր էր ի վերայ խաչին,
Ընկպեալ ընկալաւ զլեղին, զոր փոթով տային,
Թիւնք թափել քարբից օձից արբմամբ քացախին,
Ժանդ ժողով հրէից գնդին ի յաճեղ պահին
Ի էլիէլին ձայնէն, սասանէր երկիր·
Լուս լուսաւորաց ծագեաց հոգոցն ի բանդին,
Խոր խաւար ծածկեաց զերկիր, ինչ բևեռէին,
Ծագեաց ճառագայթ փառաց ի մէջ գիշերին,
Կեանքն մեր կաւօք ի խաչին էջ ի դժոխս ներքին,
Հան Հզօր զօրեղ բազկաւ զարգելեալսն ի նմին,
Ձայն առնէր ձագուց իւրոց արծուն ի քարին,
Ղօղեալ իշխանին մահու էնն անդընդային,
Ճշմարիտ ճմլեալ ողկոյզն ի կենսաբեր խաչին,
Մեղքն քաւեցաւ մեր հին մահուամբ միածնին,
Յինեներորդ ժամուն գոչեաց աւանդեց զհոգին,

Նըման նոր հաւուն թռուցեալ, եկեալ ի յերկինս,
Ծուրջ շրջապատէր Յովսէփ Արեմաթացին[2],
Ծուրջ շրջապատէր Յովսէփ Արմաթացին[2],
Չորս չարեօք պնդեալ ունէր ի վերայ խաչին,
Պատեաց պատուական կտաւովն զմարմինն
տէրունոյն,

Ջուր ջերմի յաչացն հեղոյր մայրըն խաչելոյն,
«Ռաբի՜, ռաբի՜»[4] գոչէին և ձայնիւ լային,
Սիրտն ճմլեցաւ կուսին ընդ իւր միածնին,
Վասն իւր անդրանիկ որդոյն, մեծ թագաւորին:
Տրտմեալ իւղաբեր կանայքն ի յերեկորին,
Րամեալ ժողովեալ էին, վասն առաւոտոյն:
Ցնծութեամբ բարբառ լսեցին ի մէջ պարտիզին,
Ի իջեալ սրտաբեկ կանայքն ուրախ լինէին,
Փառք տային քաղցըր ձայնիւ նոր յարուցելոյն
Քրիստոսի թագաւորին, անմահ արքային:

16 ԱՅԼ ՏԱՂ ԾՆՆԴԻ Ի ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԿԵՉԱՌԵՑՈՅ

Անըսկիզբն մեզ սկիզբն եղեալ, ովսաննայ,
Բանն ի հօրէ մեզ լոյս ծագեաց, օրհնեսցուք.
Գաբրիէլ[1] փողըն գոչէր, ովսաննայ,
Դստերացն Սիոնի[2], օրհնեսցուք.
Ենն եկեալ փութով առ կոյսն, ովսաննայ,
Զօրապետըն հրեշտակաց օրհնեսցուք.
Է՛ակից հօր և հոգոյն, ովսաննայ,
Ընթացեալ ի Յորդանան[3], օրհնեսցուք.

Թագաւոր է ծնեալ յայրին, ովսաննայ,
Ժամանակ մարդեղութեան, օրհնեսցուք.
Ի կուսէն է ծնեալ Քրիստոս, ովսաննայ,
Լոյս ծագեաց տիեզերաց, օրհնեսցուք.
Խոնարհեալ յերկնից յերկիրս, ովսաննայ,
Ծնանիլ ի սուրբ կուսէն, օրհնեսցուք.
Կամաւ հօր և սուրբ հոգւոյն, ովսաննայ,
Հինաւուրցըն մանկացեալ, օրհնեսցուք.
Զայն եղև ի Յորդանան, ովսաննայ,
Ղևտական[4] քարոզութեանցն, օրհնեսցուք.
Ճշմարիտ հօր և հոգւոյն, ովսաննայ,
Մեզ աստուած երևեցաւ, օրհնեսցուք.
Յորդորէ գետն Յորդանան, ովսաննայ,
Նորոգէ զտիեզերս, օրհնեսցուք.
Ծնորհելով մեզ թողութիւն, ովսաննայ,
Որ յառաջն էր խոստացեալ, օրհնեսցուք.
Զհանդուրժել Հերովդէի, ովսաննայ,
Պատահէր անմեղ մանկանցն, օրհնեսցուք.
Ջուր սրբեացըն զՅորդանան, ովսաննայ,
Ոսի գործէ՛ զտիեզերս, օրհնեսցուք.
Սրոքէից մեծ թագաւորն, ովսաննայ,
Վասն մեր խոնարհեցաւ, օրհնեսցուք.
Տէրն իջեալ ի Յորդանան, ովսաննայ,
Ոաբունի մեծ վարդապետն, օրհնեսցուք.
Ցնծութեամբ տօնեցարուք, ովսաննայ,
Ի [ն]ին ու նոր Աստուածն եկեալ, օրհնեսցուք.
Փառս ի վեր առաքեսցուք, ովսաննայ,
Քրիստոսի փրկչին մերոյ օրհնեսցուք։

17 ԱՅԼ ՏԱՂ ԾՆԵՆԴԻ ԵՒ ՋՐՕՐՀՆԵԱՑ Ի ԹԱՂԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Աւրհնեալդ ի կանայս տուրբ կոյս Մարիամ[1].
Բանին աստուծոյ տաճար հոգևոր.
Գերագոյն գըտար դասուցն ամմահիցն,
Դրախտ իմանալի երկնային տընկոյն.
Երկինք և երկիր քեզ երանիցեն,
Ջարկօղըն լուսոյն ի քեզ կըրեցեր:
Էակիցըն հօր ի քէն մարմնացաւ,
Ընդրեալդ ի բիւրուց ի ծնունդս Եւայի·
Թագ ի գլուխ կանանց, մեծ, զարմանալի,
Ժողովք անմահիցն քեզ սպասաւորին:
Ի մէջ գիշերի շուշան լուսափայլ,
Լոյսն, որ ի հօրէն ի քէն ծագեցաւ.
Խընդա՛, Մարիա՛մ, նորածին մանկամբդ.
Ծընար անաշխատ զանճառ հօր ծընունդն:
Կամաւ զգուշակեալն ի մարգարէից,
Հոգով յղացար զբարձողն անիծից:
Զայնիւ ցնծութեամբ զքեզ քարեբանեմք.
Ղամբա՛ր լուսափայլ, մաքրափայլ լուսոյն,
Ճշմարի՛տ ողկոյզ, այգի՛ վայելուչ,
Մարգարի՛տ անգիւտ, ակը՛ն շափիւղայ:
Յեսայի[2] գոչէ՝ Ահաւ կոյս յղասցի
Նոր զարմանալի ծնցի Մանուիէլ:
Շուշան գեղեցիկ, նարդոս մեծագին,
Ուրախ լե՛ր, քերկրեալ, խո՛ւնկ անուշաոտ,
Զքնա՛ղ տեսութիւն, լեա՛ռըն վիմածին՝
Պարծանք կուսանաց տուրբ Աստուածածի՛ն:

Ոտին մեզ տրուաւ, դեղ անմահութեան,
Սեղան սրբութեան երկնային հացին,
Վարագոյր եղեք սուրբ եկեղեցոյ,
Տուն և տաղաւար սուրբ երրորդութեան:
Ըաբունոյն բանին մայր և աղախին.
Ցնծա՛ Բեդղահէմ[3], տունդ Եփրաթայ,
Ի ութիւ սուրբ հոգոյն լուսաւորեցեր,
Փառաբանեցար ի յարարածոց:
Քրիստոսի փրկչին փառք ի յաւիտեանս:



Ա

ՏԱՂ ՄԵՏՐՈՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

Այ ծեր դառնացեալ հոգի՝
Դիւայսէր դու ի քնութենէ.
Ջաշխարհիս ամէն կուր գիտես
Ջքեզ աչօք սրատես ի սրտէ՝

Այսպէս կու քննես զերկինք
Եւ զբախտ ծնունդս ուր որ է,
Ապայ գիտացիր գերի
Քո արուեստդ զքեզ ըսպանանէ։

Ջմսըր տուիր զով առիր,
Վախելոց վաճառականիդ,
Ջհին գլխուտ ու զմազ մուրացդ
Կտրեցեր ի մէջ քաղաքիդ։

Դու փախըստական եղեր
Եւ ուսար արուեստ ճռամիտ,
Ահայ քեզ ասեմ, գերի՛,
Մեռանիս ուսմամբ քո գործիդ:

Օձն էր կորսըտեան պատճառ,
Որ եհան զԱդամն ի դրախտէն,
Հանց Նէգդանիբոս[1] արար
Զկինն եհան ի Փիլիպոսէն[2]:

Ի կերպ վիշապին դարձաւ
Եւ գոչեաց սաստիկ մեծաձայն,
Սողաց և ի գիրկն եկաւ
Զշունչն էառ ըզհոտն յանդիման:

Փիլիպոս արքայն ասաց.
«Մի վախէր, կին Ոլոմպիա[3],
Դայ է չաստուածոց հրեշտակ
Ամոնէ կամ Արմազդայ»[4]:

Չկարաց իմանալ արքայն
Զպատկեր Նեգդանիբոսին.
Կընոջն աւետիս երետ,
Թէ՝ չաստուածքն ընդ քեզ խառնակին:

Կին որ ղալատի մեղօք
Ու անկանի ի ճօշ 'ւ ի բամբաս,
Նայ թող հանց որդի բերէ,
Զինչ եբեր այս Ոլոմպիոս:

Զարքայն արքայից հզօր,
Որ աւուն է Սքանդարիպ՝[5]
Առիւծն ի վիշապ նմանց,
Որ եկուլ զաշխարհս ամենայն։

Քեզ երանի Ոլոմպիոս՝
Այս մանուկս քաջ է՝ւ անպակաս,
Բայց աշխարհակալ լինի,
Մեռանի շուտով գայ աճիւս։

Մայրն որ հանց որդի բերէ
Ի գաւառ՝ւ աշխարհս ամենայն՝
Պարտ է, որ գովեն զնայ
Արարածք՝ւ երկիր ամենայն։

Ի մէջ Ադամայ ծընընդոց
Չէ ծնեալ մարդ սորայ նման,
Աւաղ թէ չերթայ այսօր
Խափանի խորհուրդն ամենայն։

Ցորժամ որ ծընաւ զտղայն՝
Ջերթ լուսին և արեգական,
Ցլայգլուխ ձին ծովէն ելաւ
Եւ եկեալ դուռն արքունական։

Աղէկսանդր որ զայն տեսաւ
Եւ ասաց՝ փառք քեզ տիրակաց,
Ինձ պարտ է հեծնուլ զնայ
Եւ տիրել զաշխարհս ամենայն։

Ա՜յ ձի, զքեզ գովել կամիմ,
Ցըլայգըլուխ ծնունդ ծովային,
Բաշըդ հրեղէն է քո,
Լանջդ և մէջքդ է քո առիւծին:

Սմբաքդ յօրինած կազմած,
Հանց ուժեղ զինչ փիլն աճագին.
Երանի տամ այն մարդոյն,
Որ նստի վերայդ տիրովին.

Տէր և տենչալի տղայ,
Եւ քաջանց ազգէն գերակայ,
Ջերիվարդ որ ձեռ բերիր
Եւ հեծար անվախ վեհական,

Պատրաստ լեր, ամուր կացիր,
Դայ է ձի, և դու մին արքայ.
Դու աստուածաշուք պատկեր,
Դայ ո՞ ունդ ծովիտ, որ ցընծայ:

Աստագէտ մ՚ յառաջ եկեալ
Ու ասաց. «Փիլիպոս արքայ,
Դայ չէ յոմեքէ ծնունդ,
Բայց Սարայ Նեգդաւիբոտայ:

Իսկի քեզ նման դայ չէ,
Աւաւտայ Փիլիպոս արքայ
՚Ի ոչ արարածոց որդի՝
Ամոնի կամ Արամազդա:

Դայ Եգիպտացի մերմ է՝
Ի բախտէ ծընունդ գերայկայ,
Ելեալ յարգանդէ այն մօրն,
Որ անուն է Ոլոմպիադայ»:

[. . . . . .]

«Մա՛յր, գեմ կասէիր դու ինձ,
Թէ ծնունդ ես դու չաստուածոց՝
Անայ գործք յաղտնի եղաւ,
Որ խաբեաց զքեզ Նեգդանիբոս:

Հեծնում զիմ ձին ցըլայգլուխ
Ու գերի առնեմ զԵգիպտոս,
Տան նորա աւեր ածեմ
Եւ սպանեմ զՆեգդանիբոս:

Արժան և իրաւ է խիստ,
Դու Մսրայ տէր Նեգդանիբոս.
Զաթոռըն թողիր անտէր
Եւ երկիր աո Ոլոմպիոս:

Զանմեղ կինն ի մեղս ածեր
'Ի ամօթով արիր զՓիլիպոս.
Կացիր, որ ըսպանէ զքեզ,
Քո որդին այս Աղեկսանդրոս:

Առաւ զթաչն ու զթախթն զամէն
Ու աւեր էած զԵգիպտոս,

Սիրեաց և ի ձեռն էած
Ու սպանեց զՆեգդանիբոս:

Զգլուխը բերել երետ
Եւ տարաւ առ Ոլոմպիոս՝
Մա՛յր, մա՛յր, դու ճշմարիտ խօսիր,
Սալ է իմ հայր Նեգդանիբոս·

Այս մէկ բանըս լաւ եղաւ,
Որ չարին աղանդն յայտնեցաւ,
Իւր մեղքն բոնեց ըզինքն
Ցիւր ծրնած յորդուն սպանեցաւ:

Մայր Աղէկսանդրի գիտէր,
Թէ չաստուածքն ընդ ինքն խառնեցաւ,
Ցիմիկ սներես եղաւ,
Ցիւր որդոյն խիստ ամաչեցաւ:

[. . . . . .]

Փիլիպոս ննտեալ յաթոռ,
Դարեհի[6] դեսպանք առաջի,
Որք ուզողք եկին հարկին,
Պահանջեն զդրամն արքային:

Աղէկսանդր յառաջ եկեալ,
Խօսեցաւ բան զարմանալի.
Ասաց թէ՝ Այլ ոչ տամ հարկ,
Ըզտուեալն առնում Դարեհի:

Գնացէք և ջուապ տարէք
Դարէհի՝ պարսից արքային,
Թէ Փիլիպոսի որդին
Աղէկսանդր, զայս բանս կու խօսի։

Յերբ որ ես տղայ չէի,
Հայրըն իմ հարկ տայր քեզ՝ Դարեհի.
Այժմ որ ես որդի եղայ,
Պահանջեմ զհարկն իմ հայրենի։

Կրծկեալ, պշուցեալ նային
Ի յերեսն այն Աղէկսանդրին,
Մտիկ խօսելոյն դընին,
Զարմանան ըզքանըն նորին։

Ապայ եկեալ միտս իրեանց,
Իմանան ըզչիքլն առիծին.
Ասեն թէ՝ այս որ հասնի,
Սև տարի բերէ Դարեհին։

Յորժամ որ էլչիքն եկին
Ու ջուապ բերին արքային,
Արքայն տրտմեցաւ յահուն,
Վախեցաւ սրտիւ դառնագին։

«Դարեհ, ականջ դիր բանիս,
Աւատայ և դու ինձ լսէ.
Աշխարհս ի քամի նման,
Որ ի վեր ի վայր կու հոսէ։

Ջընջէր է բախտիդ քո գիրն,
Ու մահու օրըն մոտացեր,
Առնում զթաչն ու զթաղթըն քո
Աղէկսանդրն՝ որդին Փիլիպէ»:

Դարեհն յորժամ զայն լսեց,
Ժողովեալ զիւեծեալն ամենայն
Եւ քաղաքացոց ասաց,
«Փակեցէք, զդրունս ամենայն:

Ես երթամ յառաջ նորին,
Ոչ մատնեմ զինքն յոյժ մահուան,
Երկիր ու քաղաքս ամէն
Ազատեմ ի զօրացն ամենայն»:

Աղէկսանդր դեսպան եղաւ
Եւ եկեալ յառջև Դարեհի,
Դարեհ չկարաց ճանաչել,
Թէ արքայն է Սքանդրիայի.

Պատիւ ետուր, սէր արաց
Ու եհարց զբանն Աղէկսանդրին.
Ասաց. «Յոյժ թադիր ունիմ
Մարտընչել ընդ պարսից արքային»:

Յորժամ որ եղաւ քաղքէն
Թէ փախուստ, ոչ ոք չիմացաւ.
Արքայն փոշիման եղաւ
Ու զթողուլ նայ ափսոսեցաւ:

Աւուր ճանապարհի զա[ւ]րօք
Հետ քըշեաց, երբոր չի հասաւ,
Տրտմութեամբ և արտասուօք
Փոշիման ի յետս դարձաւ:

[. . . . . .]

Այս իմ թեփասիոյ հրեշտակն,
Որ երեր զթաքն արքայական
Ի սուիորական ոսկոյ,
Մարգարտօք ակամ[բ]ք գերայկան:

Արքայն ընկալաւ միրով,
Ջաչքն ի վեր եկեալ յանդիման.
Ասաց. «Իմաստուն իցէ
Գործ՝ հնազանդիլ պետից վեհայկան:

Իսկի չեմ կարեր գիտեր
Քո պատկերդ ի յով ճմանի,
Թէ մարդկան դեսպան ես դու,
Ծուկըն չէ գալոյ յայս տեղի:

Բայց թէ չաստուածոց ես դու,
Ծունր ածեմ 'ւ երկիր պագանեմ,
Ապայ յառաջ մի մօտիր,
Մինչ ասեմ պարսից արքային»:

Աղէկսանդր հեծաւ յիւր ձին,
Ցլայգլուխ իւր ձին աննման,
Անցաւ ի յանհուն մեծ գետն
Ու գընաց առ պարսից արքայն:

Աւաղ և հըզօր արքայ,
Վայ թէ գետոդ զքեզ կու նենգէ,
Կամ յորձան ալիք դորայ
Անպատեհ ըզքեզ պաշարէ:

Մուխտալ զերիվարըդ քոյ
Վախեցաւ, կանգնիլ չի կարէ.
Ցիշեա զարարիչն աստուած,
Զքեզ ի այդ խորոցդ ազատէ:

Ա՛յ ձի, ինչ աղէկ անես,
Զիս ի յայս գետէս խալըսես,
Առնուս իմ հեծեալն տանես,
Դարեհի զօրացն ազատես:

Զամէն մանուշակ տամ քեզ.
Հազրէվարդ, զինչ որ դուն ուտես,
Փառք արարչին տամ ես,
Որ աշխարհս ընտիր ուժով ես:

Թընտումն տրոտումն եղեւ՝
Դըղըրդումն մեծ ահագին.
Հարիւր հազար ձիաւոր
Ցայն մէկ օրն ի սուր մաշեցին:

«Իմ մեղքն լըղացաւ ինձ չար.
Ճանապարհ ցուցէք որ գնամ,
Զոր կայր կորուսի հեծեալս,
Ինձ խըրատ տուէք թէ ի՞նչ լինամ»:

Յոյժ տարակուսեալ Դարեհ
Եւ դըձէր զափիկն երեսին.
Նայ թուղթ ու թանաք ուզէր,
Գիր գըրել առ Աղէկսանդրին.

«Ինձ կենալոյ մի մընար.
Իմ օրերս գընաց ի ձեռաց՝
Ընց որ ևեզգեցի քոյ հօրն,
Արարի զնայ սըրտովն ի լաց,

Այսօր ինձ ի դէմ երեկ
Եւ տիրեց մօրն իմ կարօտած,
Զկինն և զդուստրն իմ սիրած
Աղեքսանդր թագաւոր գերեաց:

Աստուած քեզ շնորհաւոր անէ
Իմ աթոռս ու թագս ահնըմանն,
Գերիքս իմ ի քեզ յանձնեմ,
Կարօտեալ մայրդ իմ սիրական»:

«Յերդնում զարարիչն աստուած
Իւր անունն աճեղ վերնական,
Որ այլ չի ևեզեմ ըզքեզ
Տէր պարսից տանն արքայական,

Գերեացըն քոց դարձ առնեմ
Պարգևօք ի տուն հայրական,
Զքոյ խոցողն այրեմ հըրով
Կամ խաչեմ բազմաց տեսական»:

[. . . . . .]

Աղեքսանդր դեսպան ղըրկեց
Ի վերայ Պովրէս[7] արքային.
«Զայն հարսն որ գերի բերիր՝
Քանդակէ[8], Պըղինճ քաղաքին[9],

Թո՛ղ երթայ, ազատ արա՛յ,
Ինձ լըսէ դու, Պովրէս արքայ,
Թէ չէ զտեղդ առնում, քակեմ,
Զդայ թողում, որ երթայ գընայ»:

Պովրէս երբոր զայս լըսեց
Բարկացաւ սըրտիւ դառնագին,
Եկեալ դէմ Աղեքսանդրու՝
Այլ համար չի կայր հեծելին:

Վաթցուն հազար փիլ ունէր՝
Զընճըղեց դէմ Աղեքսանդրին.
Աղեքսանդր հընարք արաւ
Եւ մարդիկք շինեաց պըղընճի,

Մէջըն կրակով եկից,
Ծողացոյց երկաթի նըման,
Խորթուներն այրեցան հըրով,
Գոչելով ի յետըս դարձան:

Փախ ու կոխան արարին
Պօվրէսի ըզզօրքն ամենայն.
Հարիւր հազար ձիաւոր
Ծըմլեցան և եղեն կոխան:

Պօվրէս այլ փախուստ առաւ,
Թէ մըտնում ի Բեբեքիէ,
Չի կարաց ազատիլ գընալ
Ի ձեռացըն Աղեքսանդրէ:

Վայ այս Պօվրէսիս տուէք,
Որ ունէր Հընդուստան բոլոր.
Հանց ոսկի աթոռ ունէր,
Որ չունէր ոչ ոք թագաւոր:

Առեալ թանն ու թախտն ամէն [Աղեքսանդր]
Եւ տիրեաց մեծ Հունդուստանին.
Զգոված հարսն ազատ արաւ
Եւ հանդերձ հանգոյց մեծագին,

Ղըրկեց Պըղնձէ քաղաքն
Առ Քանդակինէ մեծ տիկին,
Պարգևք զանազան երետ,
Խալինաթ հագոյց տանողին:

Այն Քանդակիճէ տիկին
Թուղթ գրեց առ Աղեքսանդրին.
«Դու ես հրեղինաց ընտան.
Հողեղէն մարդ քեզ չի ընտան.

Դու ազատեցիր զիմ հարսն,
Անցուցեր զիմ հուրն ի սրտիս,
Նայ զինչ աստուած յոյս ունիս,
Թող զամէն բարով կատարի:

Ա՛յ իմ աննըման սուլթան,
Քոյ արևդ ու կեանքդ երկարի,
Դու հանց զօրաւոր լինիս,
Որ ամէն աշխարհիք հնազանի»:

Նայ Աղեքսանդրու պատկերն
Նըկարեալ ունէր ի թղթին,
Հայեաց ընդ երես նորին,
Բարկացաւ սըրտիւ դառնագին:

«Այ բիճ և չարեաց ծընունդ,
Անըզգամ դու ի բնութենէ,
Է՞ր վստահացար, եկիր
Իմ քաղաքս, որ է Պըղընձէ·

Թէ չիր ազատեր զիմ հարսն,
Որ գերի տարան Բէրեքէ,
Չի կար ապրելոյ ճարակ
Ի ձեռացըն Քանդակիճէ»:

Խալաթեաց ու բաց եթող
Ու ասաց թէ՝ «Աղեքսանդրէ՛,
Մի վըստահանար այսպէ՞ս.
Քոյ արևըդ քեզ խընայէ»։

Դարձաւ ի հեծեալն եկաւ
Ու պատճառն ասաց Քանդակէ.
«Չկայ առնելոյ ճարակ
Այն քաղաքն, որ է Պըղընձէ»։

Աղբիւր յորդառատ խաղաց.
Եւ առջևըն մարդ [յ]ածախին
Իջևանքն Աղեքսանդրի՝
Սևաթէմ մարդիկք երևին։

Ասաց ըմբռնել զնոյ
Եւ ընդ իւր կին մի մերկացուցին,
Յորժամ հեռաց[աւ] զկինն
Ի ուտել առաւ, զոր տեսին,

Յանժամ խըխընձեաց, հաչեաց,
Եւ անթիւ մարդիկ ելնէին.
Զօրքըն յետևան[ց] հասին,
Զամենայն հըրդեհ արարին.

Այ իմ հրաշագործ աստուած՝
Արարիչ յազգաց ամէնի,
Խիստ զարմանալի է քանդ,
Հիանան յերամք տեսողի։

Ըզբուսանովի ոչխար
Լըսեցաք ի Հունդուստանի,
Բայց զայս ցանծովի մարդիքս
Չենք լըսեր առակս ամէնի.

Տէր և տեսչալի մանուկ
Այսօր այս կղզիս երևեալ,
Ոտըս ձիթենեաց առեալ
Անթառամ թա[ճիս] պըտակեալ:

[. . . . . .]

Աղեքսանդր մեծ թագաւոր,
Խիստ ուժեղ և երախտաւոր,
Կէս աշխարհս քո ձեռացդ տակ,
Դու եղեր խիստ մեծ զօրաւոր,

Ասաղ և հըզօր արքայ,
Որ քաջանց էիր բարապար,
Զետ չորքոտանի եղար,
Քարշ կու գաս դու անդուրժաբար:

(b Աղեքսանդր պատասխանէ)

Վայ թէ շիջանի այս ճուրս.
Ի սըրտէս իմ կըսկծաւոր,
Որ զիս ի խաֆսա աձեր,
Կու խոցէ, զինչ օձ թիւնաւոր:

[. . . . . .]

(ե Հոոքսիճէ[10] ասաց)

Ազդեցէ՛ք է տուն պարսից
Եւ ասէք հօրն իմ Դարեհի.
Դուստրըն քո եղուկ դարձաւ
Ու լալոյ եղև արժանի։

Ողորմ ու լալի եղար,
Դարեհի դուստրը Հոոքսիճէ,
Ցերկնից ի յաւդունդքն անկար,
Կորուսիր ըզթագն ի գլխէ։

Թողուլ մոռանալ կամիս,
Աշխարհիկալ Աղեքսանդրէ.
Ես այլ մեռանիմ հետ քեզ,
Զիս ի քոյ գիրկըդ հաւաքէ։

Արքայն պատասխան երետ.
Թէ՝ Հոգիս ելաւ, դու լռէ,
Սիրտըս վառեցիր ճըրով,
Մի ձեղէր, աստուած կու սիրես։

Ինձ հաւց ուժ և թև պիտէր,
Թըռչէի զինչ հաւ թևաւոր,
Հեղ մ՚ալ իմ քաղաքն երթի,
Տեսնէի ըզմայրն իմ փառաւոր։

[. . . . . .]

«Մայր մանկագունիս լացէք,
Վայ տուէք թըշուառականիս,
Որ բարեաց թաբաւր եղայ,
Խաւարի աչուէր ծընողիս:

Այ իմ անճառն սուրբան,
Աղեքսանդր հըզօր մեծ արքայ,
Չէղէ արժանի տեսուտ,
Վայ քո մօրն Օլոմպիայ»:

Արքայս ի տապան դըրէք,
Որ ունէր շատ մի հայրենիք.
Դայ, որ աշխարհիս տէր էր,
Պառկեր է կանգուն մի տեղի:

Ես ի սայ հարցմունք եղայ.
Թէ՝ Այդ ո՞նց քեզ հերիք,
Դարձաւ ու ճուղաք ետուր,
Թէ՝ Հերիք ու շատ մ' աւելի:

Առ ձեզ պաղատանք ընկնիմ
Ընթերցողք գըրոցս ի լման՝
Ջկեչառեցիս տկար
Արարէք յիշման զիս արժան,

Որ ոտանաւոր զամէն
Ասացի, զինչ ի ամս, որ կան
Ազատ 'ւ իշխանաց ամէն
Ի այլք, որ են արքայք պատուական:

Բ

ՅԱՂԷՔՍԱՆԴՐԻ ԳՐՈՑՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿԵՉԱՌԵՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ

Փիլիպոս ընտեալ յաթոռ
Դարեհի դեսպանքն առաջի,
Որք հանողք եկին հարկին,
Պահանջել ըզդրամն արքունի:

Աղէքսանդր յառաջ եկեալ,
Խօսեցաւ բան զարմանալի.
Ասաց թէ՝ Այլ ոչ տամ հարկ
Ու ըզտուեալն առնում Դարեհի:

Գնացէք և զրոյց տարէք
Դարեհի պարսից արքային,
Թէ Փիլիպոսի որդին՝
Աղէքսանդրը, զայս կու խօսի·

Վաղ, որ ես տըղայ չէի,
Հայրն իմ հարկ տայր քեզ հանդիսի,
Այժմ, որ ես որդի եղայ,
Պահանջեմ զհարկըն հայրենի:

Կըծկեալ պըշուցեալ հային
Ընդ յերեսըն Աղէքսանդրին,
Մըտիկ խօսերոյն դըրել՝
Զարմանայն ընդ խօսըս նորին:

Ի եկեալ առ ի միտս իւրեանց,
Իմացան ըզշիքլ առիւծին
Ասցին՝ թէ հասնի աըմա օր,
Սև տարի բերէ Դարեհին

Խըրատ տամ ճըզօր արքայ,
Դու ականջ կալ ՚ւ ինձ հաւատայ,
Զինչ չինի՝ քանկի ամէն,
Սողոմոն տեսաւղն է վըկայ

Եւ զինչ մարդ ծընեալ յաշխարհս
Են մեռել՝ ճարակ մի չըկայ,
Հայնցեղ իմացիր ըզքեզ
Ու զքաղաքդ Սքանդարիայ

Արքայն պատասխան կուտայ.
Թէ՝ Այդոր ես խիստ եմ վըկայ,
Որ զինչ յԱդամայ ի մեզ
Են ծընել թագւոր ու ծառայ,

Ամէնն են ի հող դարձել,
Ամէնէն այլ մարդ մը չըկայ
Ծինուածքն են ի փուլ եկել
Ու իրենց հետն հսկի չըկայ

Վա՜յ տամ քեզ հազար բերան,
Ո՜վ խելօք Խիկարդ[1] աննըման,
Թէ Է՞ր մոլորիս յայդ բանդ
Ու պաշտես պատկեր դիւական

Ծանիր զարարիչն աստուած,
Որ երեւտ քեզ միտք բանական,
Թէ չէ յաւուր դատման
Ընկընիս ի հուրն անշիջան:

Մարմինն է ի խոտ ընդման
Ու ծաղկի, Դաւիթ[2] վըկայեց,
Եւ փուք է քամու ընդման
Յոբ[3] ասաց 'ւ Եղիփազ[4] գըրեց:

Սողոմոն[5] ըստուեր ասաց,
Եսայի նոյնպէս գուշակեց
Սքանդար դու քեզ պէտ արա՛,
Զի արիւնն ոչ ով չըմարսեց

Քան զամպն արևին պայծառ
Ի ի լուսոյ աստեղ ընդմանիս,
Քան ըզծովային ծընունդ
Ցադամայ յորդիս օտար ես,

Բայց մին ղալատ կայ քեզ,
Որ միայն մեծ զքեզ ուզես,
Վայ թէ հենց ցաւոց դիպնուս,
Շատ եղուկ ու վա՛յ տաս դու քեզ.

Ի բերանն պատուէրս արար,
Թ' իմ բանիւ ասցէք Դարեհի՝
Թէ դու զքեզ աստուած գրեցեր,
Հաւասար արև ծագաւղի

Եւ ինձ աւազակ ասցեր
Ու գլուխ ամէն գողերի,
Ամ այս գողըս գալ կամի,
Գողանալ զկեանքըդ արևի.

Դարե՛հ, դի՛ր ականջ բանիս,
Հաւատայ ու դու ինձ լըսէ.
Աշխարհս ի դօլապ նըման,
Որ ի վեր ՚ւ ի վայր թաւալէ.

Ջընջել է քո բախտիդ գիր
Ու մահու օրըն մօտել է
Առնու զթագն ու ըզթախտըն քո
Աղէքսանդր որդին Փիլիպպէ:

Եկայք որ առնենք թըտպիր,
Որ չլինինք երկիրս մեր առակ,
Բանս իրաւ է, չէ կատակ՝
Նա կուգայ հանդէս ուժընդակ·

Թէ ըզդէմս յԱղէքսանդր առնեմք,
Դարեհի ահն է դըժընդակ,
Ապա թէ հանդէս մտնուք,
Վախենք թէ լինինք խայտառակ·

Բէկլարքս՝ գլուխ զօրաց,
Սարտուցեալք ի յԱղէքսանդրէ,
Գիտեն, որ յաղթել կամի
Դարեհի հըզօրն ի քաջէ:

Խորհուրդ ՚ւ ի գանգաշ մըտել,
Թըղթաբերն ազդմամբ կու ասէ.
Անճարիցըն ճար տեսէք,
Որ կապանքըն մեզ չըտիրէ:

Ասէ մակեդոնեան հըզօրն
Աղէքսանդր՝ հեծեալ յերիվար,
Փողիցըն հրամայ երետ
Հարկանել զերգն աղմըկարար:

Մուձեդիկն ի մէջ անցաւ,
Ազդ առնէր զօրացն անմոլար,
Ըզսուրն է հանել արքայն,
Դուք ընդէ՞ր կայք հայնց կամըկար:

Չարխին չըհաւատամ իսկի,
Թէ առնէ զով ոք թագաւոր,
Ֆալաքըն փախուստ բերէ,
Յորժամ տայ աչից իւր խոլոր:

Յանկարծ յաթոռոյ ձըգէ
Ու առնէ առակ հեռաւոր,
Հայնցեղ Դարեհի եղև,
Որ փախաւ գաղտիկ ՚ւ ի մոլոր:

Մայրըն Դարեհի կուլայ,
Որ անունն է Հրոոդոնէ,
Եւ կինն արտասուք ածէ,
Որ ասեն իւրըն Ըստատիէ:

Քոյրըն քաշեց զիւր ծամերն,
Որ կոչի նա Գագիփարտէ,
Դուստրըն վալ 'ւ եղուկ կու տայ
Իւր աձիւնըն՝ Հուրքսիահէ։



ՀԱՎԵԼՎԱԾ

ԲԱՐԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵԹԷ ՈՐՊԻՍԻ ՈՂԲՍ ՎՏԱՆԳԱԼԻՑ ԵՒ ԱՂԷՏՍ ԱԻԱՂԱԿԱՆՍ ԱՍԱՑԵԱԼ Է ԲԱՐԱՌՆԱԲԱՐ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ Ի ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՆ ԻՒՐՈՒՄ ԸՄԲՌՆԵԱԼ ԴԵՂՈՎ

Աւաղ վշտապահաս տուգանաց տագնապիս տառապանաց տուայտեալ մարմնոյս, թէ զիարդ էի կամ յորպիսի հասի տառապանս, կարծիս առեալ եղջիւրօք անմահ կալ, մնալ՝ իբր թէ յԱմոնէ կամ յԱրտեմազդայ հելլենական նուագօք ի Կրաւնոսէ և յԼուսէ սերեալ ազգաբանութեամբ և այժմ յիմացեալ անճողոպրելի ի մահուանէ, որ յաղթէ յաղթողաց· Երանի էր ինձ ի դեռաբողբոջ և յաղբուն հասակին, յորժամ ճեմս առեալ ճօճէի սիգալով ի կառամարտութիւնն Նիկողայոսի և ի վայր ընկճեալ զկարծեցեալն հզօր, և պսակ առեալ զըմբշականն ոլոմպիական, դառնայի առ մայրն Ոլոմպիադա Յիշեմ զառ Դարեհիւ զօրամարտութիւնն փախստական լեալ յիմմէ բազկաց այնքան ջախջախ և մեծ թագաւորութեան իշխան, կամ զհնդկականն առ Պաւրոսիւ, զոր անդրաքայլեալ գլեցի՝ զբլուրն մսեղէն դիա թաւալ կացուցեալ Զի ոչ միայն, թէ արք թագաւորք ոչ զերծան ի յաջողած բախտէ իմմէ, այլ և զանտառասնունդ կենդանիսն ճարակ տուեալ հրոյ և սրոյ յանուպայ և յանմարդի վայրաց վարեցի և երիս մասունս աշխարհիս հար-

կատու և զօրապահանջ ինձ յօրինեցի. երկոտասան քաղաք քանդակեալս և ընդելուզեալ զարդարեցի· Արդ, որ այսքան հզօր և յաղթական փառաց հասայ, այդ այժմ կամ տարաբերեալ ծփմամբ կոհակօք ՚ի մահիճս մենական և մահահրավէր: Տեսակս իմ ցանկալի սևացեալ թխացեալ, բան զքարինս եթովպական, հասակս իմ պանծալի գթո տեալ թառիեալ ի վայելչալի պերճութեանց, գլուխ իմ ընդգըրկեալ ծնգեալ իբրև զհասկ՝ որ հասանէ ի մանգաղս մահու, ճակատ իմ լիալիր և մաքուր ծրարեալ պատեալ ի վարշամակս դեղոց, աչերս իմ ծովածաւալ պատռնանկատ և քաղցրահայեաց կաշկանդեալ և խփեալ մածմամբ՝ իբր խլրդանց և ջղջիկանաց, վարս և հեր գլխոյ իմոյ փետտեալ ցամաքեալ իբր զմանուշակ գարնանայնոյ յերիս աւուրս սպառելով: Բերան իմ և լեզու ևս երկթերթի, որ սաստականն մահ մատուցանէր և ողոքականն կեանս պարգևէր, որ և վարդ շրթանցս հոսէր, այժմ սպարդեալ լռեալ անբանութեամբ, հոտեալ, ծորեալ, ապականեալ և երեթն առեալ նմանիմ անբանից կենդանեաց· Ձեռք իմ բաւականն և քաջուղէշ, որ նիզակս և սուսերս զբազումս առնէր սրտաթափ և ահակոտոր, մէջ իմ առիւծու և ընձան կարճեալ իբր ճագարաց, ամփոփեալ ի ներքոյ վերարկուին, ոտք իմ սրընթաց իբր զգարշապարս յուշկապարաց օդապարիկ լինելով իբր Քսէներքս և Պագիսու՝ արդ վրիպեալ կապեալ ի մեռաղս մահճաց, այլոց կարկառմանց կարօտացեալ Զմտաւ ածեմ զդեգերումն մակադրական վիպասանութեանց յորժամ էի առ ճեմականն ստագիրացի ի սպաս բանեղէն և կորովամիտ կոկոզմանցն ի մայրն իմաստութեան առ Աթենայ հսկուրհույն, յորժամ ծաւալէաք ՚ի ծաղիկ բուրաստանաց իմաստութեանն, ի գիտութիւն գոյից

և ի ծանօթութիւն աստուածայնոց և մարդկային իրողութեանց, խոկմամբ լիմաստս մաճու, ընմանելով անմահից ըստ կարողութեան և հասեալ յարհեստս արհեստից և ի մուտս մակացութեանց, սիրելով զիմաստ քան զականս պատուականս: Իսկ այժմ յիմարեալ, անասնաբար ոչ կարել, գիտել զզիարդն, բայց զայս միայն զի բաղկացեալ ի քառից տարերց ի նոյն իսկ լուծանիմ, զի ինքն միայն է անմահ, որ ամենից տիրէ:

ԵԹԷ ՋԱՆՁՆ ԻՒՐ ՏԱՌԱՊԵԱԼ ԵՒ ՁՐԿԵԱԼ Ո՛ՐՊԷՍ ՈՂՋԱՍՑԷ ՈՒՈՄՊԻԱԴԱ ՄԱՑՐՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

Լացէք զիս, մարք մանկագունից միամօր զաւակաց, առաւել քան զՕթամուզ և զգեղաղէշ դուստրն Յեփթայեայ, զարքակորոյս զմայր աշխարհական, զի ոգիս թռեաւ և շունչս ել արտաքս, իսկ մարմին թշուառականիս առասպելաբար շրջի, դիակիր լինելով տատանեալ կենաց իմոց: Արևն իմ էանց և սպառեաց լուսինն լրացեալ, պարտք զօրու աստեղացն ինձ թօթափեցաւ, և խաւարեցաւ տեսլարանն ի հայեցուածէ: Եւ առ այս զի՞նչ ասացից. եգիպ տական մարգարէն ազդեաց ինձ զգալն Ամոնայ, և ես ծնայ զքեզ, որդի դիցազնական, իբր յանմահից ծոցէ ելեալ ի գրկաց եղկելոյս, և զուարակագլուխ երիվարաւն յածար ընդ ցամաք և ընդ ծով, զլերինս հարթեցեր և զյորձանուտ ձորս լցուցեր, զթագաւորս խաղ արկեալ ընդ ոտիւք գետնեցեր, զանվայր և զապառուտ դաշտս մարգաւէտ արարեալ երփնատունկ ծառօք ծաղկեցուցեր և միաւեծաւ իշխանութեամբ յարևելից յարևմուտս մտորակեցեր, և ես կարծէի զիս մայր կայսեր և ինքնակալի, այժմ, մեռելոյ մայր,

և անգամ ևս ոչ կենդանւոյ· Մեռանիմ ընդ իմ մեռելոյդ, կորնչիմ ընդ կորուսելոյդ, նուաղիմ ընդ ոգևարիդ, տապանամ ընդ տքնեցելոյդ, խոցոտիմ ընդ հարեալ սրտիդ: Այժմ պիտոյ է ինձ տապարն Հեփեստոսի առ ի հերձանել զգլուխ ծնողիս Աթենայ· Այլ զի՞նչ ասացից, արքայ և արքայորդի. կորուսի զքեզ՝ արտաքս գնալով քեզ ի Մակեդոնէ, և այլ ոչ ևս տեսի: Ծագեցար իբր արուսեակ, և ցնդեցար նմանս մրրկի, գոչեցեր ամպօք իբր առիւծ, և տկարացար զինչ սարդի ոստայն, ծաղկեցար իբր զգարուն, և խորշակահար եղեր թարշամեալ, որ բազումք յինէն զարհուրէին, այժմ ևս ի բազմաց կորնչիմ: Ուրեմն յաղթեցին ինձ աւէտք մօրն Հարեհի կամ ծնողին Պաւրոսի՝ արքային հնդկաց, որ ես այս թշուառութեանս հանդիպեցայ·

ԻՊԷ ՋՈՐՊԻՍԻ ՈՂՔՍ ՅՕՐԻՆԵԱՑ ԴՈՒՍՏՐՆ ԴԱՐԵՀԻ ՀՌՈՒՍԻԱՆԷ ԿԻՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼԻՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ

Ջնջեցաւ կտակ կենաց հիքոյս և թշուառոսիտոյս անմահիցն ջոկք մարտ եղեալ լքին զիս յերկուց դիմաց ի Պարսից և ի հելլենացւոց: Դարեհ չէ ի միջի՝ հայրն իմ հոչակաւոր, և Աղեքսանդրէ բարձաւ ի միջոյ, խուժադուժքն գրուեցան և մակեդոնացիքն կան տարակուսեալ, տուն հօր իմոյ քայքայեալ գրուեցաւ, և ապարանք առն իմոյ մեծապէս տատանեցաւ, իսկ ես հոսայ իբրև զջուր, կոխան եղէ իբրև զհող անպիտան: Ընդէ՞ր երկնեաց արգանդն Հոոդոգունեալ, կամ ընդէ՞ր ոչ հարին զիս աշտէիւ վիրաւորք հօրն իմոյ Այդպէ՞ս առեր զիս յաւանդ ի ձեռանէ հօր իմոյ, տէր իմ Աղեքսանդրէ, զի և առուր միոյ տեղեան երեսաց քոց ոչ եղէ արժանի. արարեր զիս դշխոյ և թագուհի, և

քոյին սոսկալի սիրոյդ ես ոչ եղէ արժանի. որբ էի ի ծնողաց, արդ այրի եղե ի գլխոյ Կարօտիմ մահճիդ, գիրկս արկանեմ տապանիդ, խոնարհիմ քո գարշապարիդ, յանձն առնեմ զոգիս քում ոգւոյդ: Զի որպէս հանդերձեալ ես յաստուածոցն խառնիլ երամս, այսպէս և զիս արա քեզ գերեզմանակից և մահակից, զի կին կայսեր ոչ պարտ և պատշաճ է զուգիլ ընդ ումեք:

ԵՒՔ ՆԱԽԱՐԱՐՔՆ ԵՒ ՋՕՐՔՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ ՋՕՐՊԻՍԻ ԿԱԿԱՆ ԲԱՐՁԵԱԼ ԼԱՆ ՁԹԱԳԱՒՈՐՆ ԻՒՐԵԱՆՑ

Եկայք ի միասին, թագաւորք և իշխանք, կուսակալք և կողմնապահք, կոմս և նախարարք, սեպուհք և ստրատելատք, պատրիկք և պալազատք, ըմբիշք և դիմամարտք, նիզակակիցք և սուսերաւորք, կապարճակիրք և զրահաբարձք, և այլ ամենայն արքունական սեմենի սպասաւորք. վառեցէք զդրօշսն, բարձրացուցէք զնիզակսն, կազմեցէք զերիվարս, փող հարէք պատերազմի, ձայն տուք ի բանակս հազարապետացդ, զի արքայս ոչ է մեռեալ, այլ ննջէ: Եւ զայս ասելով ի յողբ շարժին, պատառեն զպատմուճանս, ներկեն արեամբ զերեսս, փետտեն զհերս վարսից, ճողեն զմորուսս իւրեանց, հող զգլխով արկանեն, տան զերեսս միգախառն մոխրի, հնչեն զգալարափողսն, յօրինեն զդամբանականսն կուտին երամք դասուց, ողբան թշուառապէս, հեծեծեն ողորմագին, յոգւոց հանեն դառնապէս և զաշխարանն այսպէս հրատարակեն Տէր արքայ, այսքան ժամանակս աշխատ եղաք ի գործ պատերազմի, ծովակուրս և գազանաբեկ լինելով, ձիւնածեծ և խորշակահար, և զամենայն աշխարհ հարթ և հաւասար առնելով յայս եկեալ հա-

սաք, զի մտցուք ի հայրենի քաղաքն մեր Մակեդոնիա, կարօտ գոլով մեր ծնողաց և զաւակաց, զի հանգիցուք սակաւիկ մի յարեանց և ի քրտանց այժմ զձեռն ի քեզ ամփոփելով մաճացուցեր զմեզ մաճանալովդ: Ո՛վ եհար զքեզ, պատմեա զի հարցուք զնա. ո՛վ ընկրկեաց ըզքեզ, ասա զի մարտիցուք ընդ նա. ո՛վ դաւեաց նենգաբար, հրամայեա զի դատեցուք զնա. շատ անգամ քո մտեալ ի պատերազմ և մեր ընդ քո, ուրեք երբէք ոչ ծուլացաք և ոչ վատ անուն ժառանգեցաք և զկամս քո անյապաղ կատարեցաք: Ա՛ռ այս զինչ պատասխանի տացէ արքայ. Դուք ինքնին գիտէք, ո վ հազարապետք և բուն բարեկամք իմ, զի հանապազօր ասէի ի լսելիս ձեր, եթէ ես մարդ եմ մահկանացու, բայց վասն զի վերին նախախնամութիւնն ոչ տայր ինձ թոյլ հանգչել, ի ձեռն իմ մատակարարեալ նախախնամէր զարարածս, բարեացն բարիս տայր առնել, չարեացն զչարն հատուցանել: Այդ այս եղև ինձ դառն և դժնդակ չարիս, զի կարօտէի ամենուրեքեալ մօրն իմոյ ցանկալի. թերևս զերեսս եդեալ ի վերայ քաղցր և պայծառ ստեացն, որ երկամբք զիս դիացուցիճն, առ որս ոչ եղէ արժան. Արդ ես երթամ զհայրենի ճանապարհն, տալով զմարմինս իմ հողոյ, որ մայրն է անման և անապական Իսկ նոքա առ այս զի՛նչ արդեօք ասէին Մեռանիմք ընդ քեզ, ո՛վ Աղեքսանդրէ, քանզի ի բառնալ կենդանւոյն գլխի, սուգեալ սպառմամբ նուաղին ամենայն անդամքն. Լոյս էիր աչաց մերոց արդ ընդ քեզ և խաւարեցան բիբք աչաց մերոց. հաց էիր քաղցելոցս, այժմ ի բաց քո բնաւնալոյդ ի մէնջ տովամահ եղեալ սատակիմք. ջուր էիր պասքելոցս, այլ ի պակասիլդ քո ծարաւեալ ծմրիմք ի տապոյ սրտից: Եւ այսպիսի ողորմագին ձայնիւ զմահաբեր գուժն յորդորէին·

ԹԱՂԱՏՈՒՐ ԿԵՂԱՒՈՒԵՑՈՒ ԺՈՂՈՎԵԱԼ ՍՏՈՅԳ ՕՐԻՆԱԿԷ ՎԱՍՆ ԳԱԼՍՏԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌ ՄԱՐԴԻԿ, ԿՈՒԱՍՏԻՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ ՋԺԱՄԱՆԱԿՆ ԵՒ ՋԹԱԳԱՒՈՐՆ ՀԱՄԱՌՕՏԻԿՔ

Օծեալն աստուած և արարիչն յաւիտենից ծնաւի ի քաղաքի Դաւթի Բեդհալիմ, վկայութեամբ մտաւուիճ Միքիայ մաքրագործին, ի յունուարի Զ., որ ըստ ընթերցուած[ի]ն Յակոբայ եղբօրն տեառն և ըստ Գաբրիէլի աւետեացն, որ ասաց առ կոյսն վասն Եղիսաբեթի, թէ՝ վեց ամիս է, որ ամուլն կոչեցեալ է վկայութեամբ աւետարանին, եթէ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ ի թագաւորութեան հռոմայեցոց Օգոստեայ կայսեր ի ԽԲ ամին և ի հրէից Հերովդի յԼԲ, եւ ի պարսից Արշաւրի ԻԱ եւ հայոց Աբգարու յերկրորդին, ընդ որս և էին ամենեքեան: ՅԱդամայ մինչև ցարդ և [ը]ստ հրէականին քրոնիկաւ[ն]., իսկ եօթանասնիցն ոճի ՐՃՂԸ, ըստ Եւսեբոսի ՐՂԱ, եւ ըստ ասորոց ՐԻԶ և ամն երկոտասան լուսնեա, որ և Օգոստոս էր երկրորդ ինքնակալ զկնի Յուլիոսի, զոր ասեն Փորաւհան. ի սոյն ամի կատարի Դաւթի և Յեսուեայ մարգարէութիւն. Միւսն ասելով թագաւորք Արաբայ և Սաբա պատարագս բերցեն նմա, միանգ եթէ Սաբա կնդրուկ և խունկս բերելով, զի եկիմ հասին ի հեռաստանէ թագաւորք մոգուցն, ԲԺՌ (1200) հեծելօք և լուսա, թէ տով է ի Պաղեստին. թողին զզօրսն առ Աբգարու և ինքեանք, որ մեծքն էին, գնացին երկոտասան իշխանօք և հազար արամբք՝ Մելքոն պարսիկ, Գասպար հնդիկ, Բաղդասար արաբ, զոր և այլք այլ անուանք ասեն, սոյնպէս՝ Մատաթիլաթա, Թեշ-

բա, Սաղաճուրաթայ, ունելով պատարագս երիս իրս խորհին և խորհրդատոր՝ ոսկի իբրև աստուծոյ և թագաւորի, կնդրուկ իբրև քաւչի և քահանայի, զմուռ իբրև մարդոյ և մահկանացուի:

Իսկ յորժամ խօսում աստղն կանգնեցաւ ի գագաթ այրին, ևորքա ուրոյն առանձին մտին իւրաքանչիւրն ընծայիւք և երկրպագեցին Այն, որ զոսկին ունէր, ետես իբրև թագաւորի կերպարանս աստուծոյ և բիւրք բիւրուց առաջի ևորա և էաո գիրս ոսկէնկար սակս ազատութեան աշխարհի ևորա. Իսկ որ զխունկն ունէր, ետես ի ձևս քահանայապետի և դպրութիւնք բացեալ առաջի ևորա և նմա ևս ետուն գիր թողութեան և ազատութեան գրեալ մելանաւ Իսկ որ զկնդրուկ ունէր, մտեալ ի յայրն տեսանէր բևեռեալ բազկատարած ի վերայ խաչին և ողբք և աշխարհումն պատեալ զնովաւ ետուն ևորա, իսկ և գիր օրեալ արեամբ վասն յանցանաց թողութեան, և այս զեկոյց Սեկուևդոս իմաստունն և տեսանող· Եւ Լուկանոս գրեաց յաստրոց առ կայսրն Օգոստոս «Ասասցէ Ինքնակալութիւն ձեզ, տէր իմ արքայ, զի եկին յարևելից ի հարաւային կողմանէ թագաւորք Գ, չքնաղ և զարմանալի պատարագօք, իմաստուն և հանճարեղք հմուտ աստեղաբաշխական վերլուծութեանց և երկրպագեցին ի ծերպս վիմաց մանկան միոյ, ծնելոյ ի Պաղեստին, առաջնորդութեամբ խոնարհագոյն և լուսափայլ աստղի մի». Զոր լուեալ զարմացաւ արքայն և կոչեաց զամենայն իմաստասէրս աշխարհին իւրոյ, որք հմուտ և ճարտարք Էին ևորագիտ տեսլեանց և հշանաց, և բացեալ զգրեանս աստեղաց և ըոամի սոյնպէս ասացին՝ Ծերկրայնոց ոչ Է մանուկն, այլ երկնաւոր և զարմանալի:

Արդ, մոգքն ոչ դարձան առ Հերովդէս, զի հրամանէ հրեշտակի աստուծոյ, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհս իւրեանց, զոր յետոյ իմացեալ Հերովդէս զկնի երկու ամաց հրամայեաց կոտորել զմանկունս Բեդղեհէմի՝ յերկամեայից մինչև ի խոնարհ, զի թերևս սպանցի և ընդ նոսին անարգել և կուսածին մանուկն Իսկ դահճաց սուր եդեալ կոտորեցին մանկունս ՈՆԿԲ և վարդագոյն արեամբ նոցա լցան փողոցք ագարակաց գեղաստանացն նոր ծնեալ մանկան դեռաբոյս և նորաբողբոջ մարտիրոսաք: Ապա, յորժամ սուրն վաղակաւոր զկաթնն ընդ արեամբն փայլեցուցանէր, յայնժամ երիտասարդ կին մի, զմանուկն իւր առեալ յատենէն և բարձրացուցանէր բազկօքն ասելով. «Ո՞վ կուսածին մանուկդ, յուր և կաս, ընդէ՞ր այսքան արեամ և խղճի տիրանաս Արդ եթէ երկնաւոր ես, որպէս ասեն, օգնեա՛ արտաբեկ և լերդակոտոր մարցս, միջնորդութեամբ մօր քո, որ գիտէ զաղետ մանկանն» Իբրև մեծագոչ ձայնիւ կինն այսպէս պաղատեցաւ ի հրեշտակէ աստուծոյ, նորին մանուկն յօդ յափշտակեցաւ, և դահիճքն տեսեալ ազդեցին Հերովդէի. «Մանուկն այն, զոր խնդրես սպանանել, յերկինս վերացաւ». Իսկ նա ամօթալից եղեալ հրամայեաց դարձուցանել զսուրն ի պատեանս իւր Այլ այս վասն այնորիկ եղև, զի կատարեսցի առածն բան տեսանելի յարգանդէ սրբեցելոյ մարգարէին՝ Հռաքւէլ լայր զորդիս իւր և ոչ կամէր միխիթարիլ, զի ոչ էին ի միջի

Արդ այս այսքան եղելոյ և կատարելոյ

Ապա յառաջնորդ[ութեամբ] հրեշտակին տեառն, արդարև և անսխալն Յովսէփ առ Մարիամ և զմանուկն, երթայր յաշխարհն յԵգիպտոսի և քաղաքն Հերմոպոլիս, զոր

շինեալ էր մեծն Մովսէս՝ որդի Ամրամայ, հրամանաւ Թորմեթայ՝ դատեր արքային Փարաւոնի:

Եւ հասեալ ի դուրս յեր[ե]կորեալ ի ժամ քնամտին, տեսին ախեալ կայր ոչ կարացին մտանել, օթեցաւ առ այրի կնոջ մի ազգաւ դպտի. Իսկ նորա տեսեալ զչքնաղագեղն Մարիամ, զի բարձեալ ունէր զլուսաւնկար մանուկն, առընկալաւ զնա ի գիրկս իւր, իբրև զհինօրեայ քահանայն Սիմէոն, նմանեալ մաքուր դատերն Փաշուէլի Աննայի: Հարցաւէր զծերունին Յովսէփ՝ Ուստի՞ գայք կամ յոմ[մ]է՞ իցէ աննման և անգաղափար մանուկս այս, զոր չէ ոք տեսեալ ի մարդկանէ. Եւ ծերն կայր լռելեայն և ոչ տայր պատասխանի:

Իսկ օտար և անծանօթի կինն արար մեծարանս մանկանն և լցեալ զջուրն ի կոնքն, լուաց ըստ օրինի գորովամիտ մարցասիրաց եւ ապա հանեալ ի ջրոյն նորագոյն մանդլով պատեալ և գրկեալ գրգուանօք՝ երգս քաղցրաձայն մատուցանէր և ասէր

Նման է մայր քո արուսեկի,
և դու նման արեգական,
Նման է մայր քո ամպոց ցօղելոյ,
և դու նման ծիածանի՝ գոտոյն Նոյի,
Նման է մայր քո Եդեմական դրախտին,
և դու նման ծառոյն կենաց,
Նման է մայր քո ծովուն Եսեբոնի,
և դու նման լուսափայլ և ոստրածնունդ մարգարտի,
Նման է մայր քո աւուրց գարնայնոյ,
և դու նման ծաղկին համասպրակաց,
Նման է մայր քո մեծի թագուհւոյ,
և դու նման որդոյ թագաւորի:

Արդ այսքան և առաւել քան զայս երգս գովեստից մա
տուցաներ և տայր զմանուկն ի գիրկս մօր իւրոյ և ըստ
իւր չափոյ ճոցա սնեալ մատուցաներ:

Այժմ ես երանի տամ կնոջն այն երանուհոյ, զի թէպէտ
էր նա այլազգի, սակայն ձեռք ճորա շօշափեցին զբանս
կենաց

Իսկ յառաւօտու պահուն յարուցեալ Յովա՛փ ի քնոյ,
շնորհակալութիւն մատուցաներ այրի կնոջն և ասէր՝ Հա
ւատացէ՛ քեզ տէր աստուած հարց մերոց և լցուսցէ զտուն
քո ամենայն բարութեամբ

Եւ առեալ զՄարիամ և զմանուկն եմուտ ի քաղաքն

Եւ կնոջն առեալ զիւր փակեղն եդ ի պահեստի եւ ջուր
լուացմանն մանկանն արկանէր ի պարտէզ իւր Բայց
ի մտանել տեառն ի քաղաքն ի հիմանէ շարժեալ դղրդե
ցաւ առհասարակ, ընդ որս տաճար կոոց հանդերձ ամե-
նայն բագնօքն ստորասուգմամբ ի վայր անկեալք և ման
րամաղք եղեալ կործանեցաւ տունն ՍՆԽԲ, զոր տեսեալ
քրմանցն զաղաղակ բարձեալ բողոքեցին ի դուռն ար-
քային Իսկ թագաւորն, հանդերձ կողապահ կուսակալօքն,
ելեալ ի թեատրոնին և փողով հնչմամբ, և քնարիւք: Ժո
ղովեցաւ ամենայն իմաստասէրքն այր հմուտք ամենայն
հմայական և հմտական արուեստից երազագէտք, նշանա
լոյծք, աստեղաղատք, ամովնագիրք, լակատեսք, ծննդա
բանք, բախտագիտք, ճակատագիրք, մոգահիւսք, ըռամա-
խօսք Իսկ ւորքա ամենեքեան շարադասեալք յատեան բա
ցին զգերշր[ջ]անակ մակաւարսն իւրեանց կամէին հասու
լինել յանկարծահաս տագնապին, զոյ կրեցին բագինքն
Ապա ծեր մի, որ գիտէր զամենայն քաղդէութիւն ընդ աղօտ
իմացեալ ասաց «Գիտութիւնք լիցի տեարց մերոց և իշ

խանաց, զի շտապահաս տուգանն, որ ոչ երկրայնոց է, այլ երկնաւոր բարկութենէ, քանզի անճառօք աստուած իջեալ յեղական արարածս և այսօր մտեալ ի քաղաքս մեր, կռածուածոքս մեր խիզախեալ տատանմամբ յոչ հանդուրժեալն անկեալ խորտակեցաւն» Արդ իբրև լուան զբօթալից բարկութիւն խնդրէին գտանել և ոչ կարացին, և ո՛չ որպէս անպէտ ստայօդ պատմութիւն ասէ, զոր մանիքեցիքն Տղայութեան աւետարան կոչեն ի Քրիստոսէ: Արտաքոյ թողլով զայս, անդրէն ի նոյնն իսկ դարձցուք:

Եւ յորժամ ոչ գտին ապա այն[ու]հետև զսահմանօք շրջէին տեղեկացեալ և գտին ի դրունս քաղաքին զկինն այն այրի. ապառնալեօքն հարցանէին, և նա ի հարկէ պահանջման ասաց զոր ետեսն և բացեալ զմանդիլն ցուցանէր, զի այնինչ փոխեալ էր ի ձև ոսկոյ սրբոյ, և մտեալ յանջրդի պարտէզն տեսին Բժ ան ծառս բուսեալ զարմանալի, ընդ որս պատկերս տպագրեցին ոսկով՝ նկարեալ մանուկն և մակագրեցին առ պատուանդանին, եթէ՝ Այս պատկեր է անճառօք մանկացելոյն աստուծոյ: Իսկ ծառքն այնոքիկ կան բազմացեալ պտուղս բերելով պարարտ ձէթ, զոր պալատան կոչի

Ապա անդառնօր կացեալ Մարիամ հանդերձ մանկամբն, մինչև հրեշտակն աստուծոյ ասէ. «Յովսէփ, առ զմանուկն և զմայրն՝ գնա, զի կորեան, զոր խնդրէին զմանուկն» Այնուհետև մանկացեալն Յիսուս գայ ի Պաղեստին ի քաղաքն իր Նազարէթ, ըստ մարգարէին, թէ՝ Նազովրեցի կոչեցի. Եւ հասեալ նմա երկոտասան ամն, ընդ վարդապետս և պսիրս օրինացն ի Մովսիսէ և յամենայն մարգարէից խոհեր և զարմացուցանէր և զամենեսին յամօթ արարեալ, մինչ գրեթէ հեծծէին քրթմնջելով. և ահա զեկուց ասին թէ՝

Ուստի՞ է սմա այս իմաստութիւն, գիր ոչ գիտէ Կուրացեալ քողովն Մովսիսի անձանօթ եղեն՝ սմա կոյս յղացի կամ թիւեսցէ զատազան յՆսաեայ, զայլ ամենայն, զոր գրեցին տուն և տեսութիւն Դաւթի մառեանն հին հասարակաց, թող զարտաքին վկայութիւնս և զայլոց ևս, որ անբաւք են և անքովանդակք:

Եվ այս ըստ այսմ սարասի ասի:

Յիշեա զտէր Խաչատուր Կեչառուեցի ի տէր, և զծող ամին ի սուրբ յաղօթս ձեր:

ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՕՐՊԷԼԵԱՆ ՈՂԲ Ի ԴԻՄԱՑ Ս. ԿԱԹՈՂԻԿԷԻՆ[1].

Ա

Ձայն բարձրգուժ և ահագին
Նման օդոցդ որոտացին.
Կանչիւն ահեղ և սաստկագին
Գայ ի դաշտէդ Արարատին:
Լնու զաշխարհ բոլորովին
Չորեքծագեան տիեզերին.

[1] Ողբի այս բնագիրը կազմել ենք հիմք ընդունելով Կարապետ Կոստանյանցի կողմից 1885-ին Թիֆլիսում հրատարակված օրինակը, ինչպես նաև Մաշտոցի անվան Մատենադարանի № 8029, 9777, 2407, 2079, 3628, 3480, 1870 ձեռագրերում պահպանված ընդօրինակություններ: Ներկա հրատարակության մեջ հաշվի են առնված Մ Աբեղյանի դիտողությունները (տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ Դ, Երևան, 1970, էջ 269),

Բախէ զակաւնջս ադամածին
Բոլոր ազանցս մարդկային։
Թափէ զիւեզս ամենայնին
Եւ արտաքեկ առնէ բնաւին.
Շարժէ ի յողբ աննիւարին
Եւ յարտասուս ողորմագին։
Տալ հառաչել հեծեծագին
Կակաւ բառնալ յոյժ ցաւագին.
Կոչէ ի սուգ իւր վշտագին
Երթալ ի գուժ աղաղակին,
Լինել կցորդ ողբոց ձորին,
Վայ և եղուկ կարդալ ամին։

Բ

Արդ ընդ ձայնիս այս մահաւծին
Պակեաւ լսօղք հանուրց ազգին
Զարթեաւ ի քնոյ մահաբերին,
Փոյթ և շտապ ընթանալոյին.
Խուռնեալ ամբոխք կարաւանին
Խիտ զմիմեանց հետ կոխէին.
Յարամանեան տունն երթային,
ՁԱրարատեան դաշտն լցին,
Ի Նոր քաղաք Հայոց հասին,
Այն որ Վարդգէս կոչիւր նախկին,
Զոր և Վաղարշ Արշակունին
Ընդարձակեալ զծիր պարսպին,
Դնէ ի նմա զիւր արքունին,
Փոխէ յանուն իւր զտեղին

Գ

Տեսին ի նմա զարքայուհին
Զայն Երկնաւոր Թագաւորին,
Զխորան փառաց Տեառն Յիսուսին,
Զմայրն լուսոյ Հայկայ զարմին
Մերկ խայտառակ ի բաթրոնին
Զանձամբ արկեալ զքուրձ խաւարին,
Հերքն ճողեալ որպէս կնտին,
Ստինքն ցամաք զերդ ընկնդկին,
Զկուրծքն բախէր քարամբ ուժգին.
Առուք արեանց իջանէին
Մոխիր կուտէր նման բլրին,
Ցաւէր ձեռամբն ի գագաթին.
Երամք կանանց ճչող ջայլից
Շուրջանակի զնա պարէին
Դասք երգողաց կանգնեալ կային,
Զդամբանական փողս ածէին.
Աւաղական ողբովք լային,
Զգալարափողսն հնչէին.
Կէսքն շիւան մեծ քարշէին,
Կէսքն զվարսից փետէին:

Դ

Ապա հարցուկ նմա լինին,
Եկեալքն ի ձայն աղաղակին.
«Այս ո՞ւստ, այս ո՞ւստ ճիչս ահագին

Գոչիւնս ամէն նման ամպին.
Այս ո՞վ, այս ո՞վ ի բազմոցին
Նման մեծի արքայութեւոյն.
Այս ի՞նչ, այս ի՞նչ սուգ անհնարին,
Որ ոչ եղեալ և ոչ լինին»։

Ե

Պատասխանէ մեծ թագուհին,
Բանալ զբերանն ցաւագին.
Հոգոց հանէ խորոց սրտին,
Զձուխն ցնդէ թանձր ոլորին.

«Այս ե՛ս, այս ե՛ս, Էջմիածին,
Իմ կուսածին թագաւորին,
Որ հարսնացեալս էի նմին
Ի յաշխարհիս թորգոմածին։
Երբեմն էի որպէս զերկին,
Հիմ հաստատ եմ զոհերին.
Երբեմն արփի արևածին,
Այժմ խաւար անհնարին.
Երբեմն թագ կայեալ ձեռին
Անեն բազկացն իմ Յիսուսին,
Այժմ անպիտան նման աղբին
Եղեալ կոխան չորքոտանին.
Երբեմն հարսն առագաստին
Մածեալ գրկօքն իմ փեսային,
Այժմ եմ անեխս օտարոտին

Անպէտ նման հոսեալ ջրին:
Իսկ այս, որ շուրջ զինն պարին,
Են իմ դստերքն, որ նախ ելին,
Զորս աստ և անդ հարևնացուցին
Եկեղեցիք Հայաստանին:
Ժողովեցաք ի միասին,
Լնուլ ողբովք զաշխարհ բնաւին.

Զ

Արդ դուք ականջ դի՛ք իմ բանին,
Լուարո՛ւք զաղէտս իմ վշտագին,
Կոչեմ և աստ զօրքն վերին,
Զայն արձակեմ ի վեր յերկին.
Զի գան ի վայրս իմ յիստորին,
Խառնին ընդ ազգքդ երկրածին,
Լսեն զգանգատս իմ դառնագին,
Զար աղէտից իմ կցորդին,
Ողբան և լան ըստ արժանւոյն
Ամբաւ վայիւք ինձ ահատակցին.
Զի թէ միոյ վասն ոչխարին
Սուգ է ընդա անհնարին,
Ապա քանի՛ անթիւք էին,
Որք առ ինն կորեան բնաւին·

Է

Լո՛ւր ինձ, երկին և դա՛սք վերին,
Միտ դիր, երկի՛ր, և որ ի սմին,

Ես թագաւոր էի նախկին,
Բարձր և հզօր անպարտելին,
Կանգնեալ յաշխարհս Ասքանազին,
Տիրեալ ազգաց ու ազանց սորին,
Ի դրանց Հոնաց և Կովկասին,
Ուր ծով Կասպիցն է և Խազրին,
Մինչ ի ստորին կողմն Գամրին
Եւ Կոլխոսն հաստ սահմանին,
Ի Պոնտոսէ հիւսիսային
Մինչ ի Վրկանն պարսկային։

Բ

Արեգակունք առ իս կային
Պայծառ և սեհեղ քան զգալին,
Ծնորհն անման քահանային,
Պատիւն մեծ թագաւորին.
Փեսայն ճեմէր յառագաստին,
Հանգչէր ընդ իս միշտ յանկողին.
Ծնայ որդիս գեղեցկածին,
Նաև դստերս քուսածին.
Զօրք իմ անթիւ առ իս կային,
Որպէս օրէնն է արքային.
Ձայնք պաշտամանց յիս հնչէին
Նման վերնոց լուսեղենին.
Տօնք տարեկանք յիս խմբէին
Անհամեմատ յազգ մարդկային.
Գեսք իմաստից յիս բղխէին

Նման Դկլաթալ և Եփրատին.
Պայծառազարդ խրախանձային
Ես իմ մանկամբքն դեռածին:

Թ

Յանկարծակի դիպալ չարին,
Որ չէ եղեալ յազգ մարդկային,
Իմ թագաւորն այն երկնային
Յիս հայեցաւ խաչթի խորին.
Գլխոյս երետ իմ կնտութիւն,
Զթագն ի յերկիր ընկէց ստորին,
Արեգակունքն, որ յիս կային,
Խաւարեցան ամենևին.
Փեսայն այրի թողեալ բնաւին
Հալածեցաւ յաշխարհն ստորին.
Որդեակն իմ սէգ Արշակունին,
Որ աւդրաձիկն էր և նախծին,
Զթոշակն էառ մահու յետին,
Վախճանեցաւ ի գիրկ ծնողին.
ԶԱրտաշիսէ ասեմ վերջին,
Որ էած խաւար Հայոց ազգին:

Ժ

Բայց միւս ևս այլ կայր նորածին,
Զոր զգուշութեամբ սնուցանէին.
Միխթարէի ես զիս ինքնին,
Մեծ պարծէի յուսով նորին.

Որ ի տաճէն էր Յուդայիւ
Գրգռեալ անուամբ Բագրատունիւ։
Աւա՛ղ յիշմանս այս երկրորդիւ,
Որ զիս խոցեաց անհնարիւ,
Անբուժելի վիրօք վերջիւ,
Որ ապեղաձեօք ոչ բժշկիւ։
Որք զարգացեալք յարքունս հասին,
Յարքունական յաթոռ նստին.
Զթագ արքայիցն այն առաջին
Որպէս պսակ ի գլուխ էդին.
Եւ զիս սակաւ կազդուրեցին,
Թէպէտ առ իս ոչ օթեցին.
Քանզի աթոռ նոքա արկին
Ի Շիրակայ տանն ի յԱնի,
Յերազգաւոր մեծ աւանին,
Նաև ի Կարսն Վաճառդին,
Տիրեալ Վրաց և Աղուանին,
Հայոց բոլոր միշ յԱսորին։
Որոց Աշոտն էր առաջին,
Ապա Սմբատ որդի նորին,
Որ վկայեաց ի մեծն Դւին՝
Կախեալ զփայտէ ճման Փրկչին.
Յետ որոց այլքն ի նոյն կարգին՝
Որդիքն ընդ հարցն յաջորդեցին,
Մինչ ի Գագիկ բնաւից վերջին,
Որ գնաց անդարձ յաշխարհ Յունին,
Զոր և անդէն իսկ կորուսին
Չարաբարոյ ազգ Հոռոմին։

ԺԱ

Ահա՛ կորեալ քոլորովին
Մտեալ ի տուգ դառն և ուժգին:
Ո՞ւր է որդին իմ նախածին՝
Արշակունի տունն առաջին,
Կամ ո՞ւր կրաերն զկնի նորին՝
Բագրատունի տունն վերջին:
Ո՞ւր են փեսայքն և փառք նոցին,
Պատրիարքունք Հայոց ազգին,
Որք մինչ Յովսէփ Հողոցմեցին
Յիմ սեմենիս հանգչեալ կային,
Ապա ի Դվին չուեալ գնացին
Բանիւ արբոյ զօրապետին՝
Վարդանայ Մամիկոնին՝
Սպարապետին Հայոց ապային.
ԶԳիւտ ընտրեցին զերաձելին
Ի Սուրբ Գրիգորն նստուցին,
Մինչ Յովհաննէս այն Գառնեցին
Կացին աւդէն ի նոյն տեղին.
Բայց աւտից աստ զիս խնամէին,
Որպէս օրէնն էր ծնողին:

ԺԲ

Իսկ ի զորանալ Իսմայէլին
Սրոյ ձեռին հագարացին,
Եղեալ երկփեղկ տունս Արամին՝
Զեռամբ Յուսփայ աւիծելոյն,

Ճեղքեալ յերկուս թագաւորին՝
Բագրատունեացն և Արծրունին,
Գագիկ որդին այն Դերենկին,
Կապեալ իւր թագ դէմ Սմբատին,
Որ և կորուստ եղև բնաւին
Հայոց ցեղիս բոլորովին:
Աթոռք բազումք անկանէին,
Տունք ւ ապարանք կործանէին,
Իշխանք անհետ կորնչէին,
Ազգօք իւրեանց ջնջեալ հեղձին,
Ազատորեարն ի բաց խլին,
Նման ծխոյ ապառէին,
Եկեղեցիք քանդեալ լինին,
Եւ յաւարի հարեալք գերին,
Գեղք և աւանք աւերէին,
Քաղաքք և բերդք տապալին:

ԺԳ

Սակաւ աւուրք ի բաց ջնջին,
Անհայտ, որ նիշ բնաւ չէրնին,
Բոլոր գաւառք Հայաստանին՝
Որպէս խաւնձողք զերծեալք ի հրին,
Յանցոր անցորդք ճանապարհին
Տեսեալ զգլուխըն շարժէին,
Զարմանք զմիտս ըմբռնէին,
Ծըննչեալ ի բաց անցեալ գնային:
Իսկ սինքորք Բագրատունին,
Թէպէտ սակաւ ամօք կացին,

Այլ ջախջախեալ եղէգ էին,
Բեկեալ կեճօք տատանէին,
Ընդ որ հայրապետքըն շրջէին,
Ալէկոծեալք այսր, անդր յածին:

ԺԹ

Մինչ ի Վահրամ Պահլաւունին,
Զոր Գրիգորէս յորջորջէին,
Որդի մեծի Մագիստրոսին
Գրիգոր մարզպան և կիտօնդին
Պոռոտոսպաթար կոչնդին,
Հայոց մեծաց սևաստօսին,
Սա ցանկացեալ գրոց իմաստին,
Դնէ տեղապահ զԳորգ ծերունին,
Զուէ յաշխարհըն վատածին,
Մտեալ ի քաղաքն ի Ըստապօլին,
Թարգմանութեամբ յամեալ ի նմին,
Դառնայր այսրէն յիւր հայրենին,
Լուեալ զառումն իւր քաղաքին
Ի ձեռն պեղծ Ալփասլանին՝
Զտունն նախագահ Բագրատունոյն
Զան ի քաղաքըն Շարային:
Գընայ ի տուն մեծ իշխանին,
Որ Գող Վասիլն կոչէին,
Բնակէ ի մեծ մեհնատանին,
Զոր Կարմիր վանք յորջորջէին:
Կոչէ առ ինքն զիւր ազգային՝
Ըզտէր Բարսէղ՝ ճոխն և արին,

Զոր իւր կատաւ ձեռնադրեցին
Յարհիսկան տան Հաղբատին,
Գնացին ու այլ ոչ դարձան քնաւին,
Զի անդէն զվախջան առին.

Ժե

Իսկ թագաւորքն որք աստ կային,
Գագիկ՝ որդին այն Աշոտին
Եւ միւս Գագիկըն Կարեցին՝
Որպէս զըստուեր նոքա անցին,
Խաբկանօք այն սիղծ ազգին՝
Առ թագաւորքն Յունաց գնացին,
Զմինն ի կղզի ձգեալ կորուսին,
Միւսոյն ետուն զբերդ ծամրնդին,
Զոր եւ յետոյ խեղդեալ սպանին
Ձեռամբ այն շուն պիղծ պապային.
Բայց միւս Գագիկ Վանանդեցին
Վախճանեցաւ ի նմին ամին,
Թողեալ ժառանգ իւրում թաքին
Զմեծէքարիմ քաջն և արին,
Որ և տուեալ զիւր հայրենին
Ի Դիոժէնն՝ արքայ Յունին,
Առնու փոխան հարոյր պատատին
Եւ Սեբաստ քաղաք ընդ նըմին:
Անդէն և անդ նոքա մնացին,
Առժամանակ մի փայլեցին,
Յետոյ երազք եղեն քնաւին՝
Զարթուցելոց ի քնոյ մահին:

Բայց միւս ևս այլ մեկ ջահ լուցին
Ի տան Բաղաց Սիսականին
Սմբատ սեպուհ քաջազարմին.
Ի հայկազանցն այն առաջին՝
Աջոյ բազուկք Հայոց ազգին,
Բարձր և հզօր անպարտելին,
Թագաւորեալք թագ կապեցին,
Ուժգին և խրոխտք ընդդէմ չարին:
Աւուրբք բազմօք ի յետ անցին
Ընդ թագաւորս Բագրատունւոյն.
Հարիւր և քսան ամք յաւելին
Վասն ամրութեան այնմ աշխարհին,
Որոց վերջին Սեճէքարիմ,
Նաև Գրիգոր որդի նորին:
Ապա և զայս ի բաց բարձին
Ի ժամանակս Ելտկուզին,
Ազգն անիծեալ և պարսկային,
Որք հրով զաշխարհս տոչորեցին
Ի վեց հարիւր մեր թուականին
Եւ տասնևհինգ յաւելուածին:

ԺԲ

Ահա՛ սոքա ազատէն անցին,
Բնաւին ի բաց եղծեալ գնացին,
Որպէս զատուերք այլ չերևին,
Նման երազոյ կարծեօք թուին:
Որպէս ծաղիկք ամարայնին

Արևակէզ թարշամեցին,
Որպէս սաղարթք վարմեալ ծառին
Խորշակահար ցամաքեցին:
Որպէս զանտառ Լիբանանին՝
Զսարդն և զսօսն և զնոճ սարին,
Տապարահատ կործանեցին
Սուրք անխնայ Իսմայելին:
Արդ ոչ ևս է, ոչ երևին.
Անէացեալք նման նանրին,
Միայն այրի զիս աստ թողին,
Որպէս զոչինչ ի բաց լքին:
Արդ մնացեալ յանմայր դաշտին՝
Ձերդ զգազան անապատին,
Զաչուերս ածեմ կողկողագին,
Զայն արձակեմ տողոմագին:

ԺԷ

Ո՛ւր էք, որդի՛քդ իմ սրբածին,
Եկա՛յք առ մայրս ձեր նախնին,
Որպէս օրէնն է զաւակին,
Տանել խնամ ծեր ծնօղին:
Ամենևին ինձ չերևին,
Բայց թէ ոգնիք ընդ ճագարին,
Կամ Մկիթացի ճօրանք Թուրքին,
Կամ խայտառակ մանկունք նոցին,
Որք միշտ կոխան զիս առնէին,

Տեղիք չարեացն, որք գործէին։
Ահա վար՝ ինձ բիւրք ընդ բիւրին,
Անհուն եղուկքն ի յիս կուտին,
Տեսէ՛ք զիմ փառքն զառաջին,
Տեսէ՛ք զվերջին նախատս անձին,
Թէ ո՛ւր էի, ՚ւ յո՛ր ընկեցին,
Յերկնից յերկիր զիս իջուցին։
Խորք անդնդոց զիս ծածկեցին,
Որ այլ չունիմ յոյս փրկողին։
Ո՛ւր են փեսայքն իմ առաջին,
Հայրապետաց ջոկքն, որ անցին.
Ո՛ւր թագաւորքն իմ են նախկին,
Ո՛ւր և ազատքն ընդ սեպուհին,
Ո՛ւր են իշխանք գահագլխին,
Նախարարաց կոյտքն, որ կային,
Ո՛ւր զօրութիւնք բիւր բանակին,
Խուռնեալ ամբոխքն անթուելին։
Ո՛ւր րաբունիքն, որ յիս կային,
Դասք երիցանց կղերիկոսին,
Ո՛ւր սարկաւագքն յիմ բադրոնին,
Ո՛ւր են դպիրքն ի տաճարին,
Ո՛ւր ընթերցողք անագաւնին,
Ո՛ւր են փսաղտքն, որք երգէին·
Ո՛ւր իմ հանդերձ Լակոնացին,
Ծղարշատեռն և ծիրանին,
Ո՛ւր են կերպասքն ընդ բեհեզին,
Եւ կապուտակքն հնդկային·
Ո՛ւր են ճամուկքն ընդ կամարին՝
Փողեալ ոսկւով ընդ մարգարտին,

Ո՛ւր ծամակալքն իմ տփերին,
Ո՛ւր վարսակալքն կեփազին,
Որք ի համակ ոսկի լինին՝
Յեռեալ ակամբք մեծագին։
Կայծ, կարկեհան ընդ շափիւղին,
Կարմիր յակունդ սարդիոնին։
Ո՛ւր պահանջանքն իմոյս բազկին,
Եւ ապարանջանքն իմոյս ոտին։
Ո՛ւր ձայն երգոց պաշտօնէին,
Ո՛ւր և բուրմունքն աւուշ հոտին,
Ո՛ւր կաթեղունք լուցեալ ջահին՝
Նման աստեղացն, որ ի ցերկին,
Ո՛ւր եմ զեմմունք մեծ խորհրդին,
Որ միշտ առ իս կատարէին,
Ո՛ւր հաշտութիւնք աստ Արարչին,
Որով փրկեալք աշխարհ լինին.
Արդ զո՞ր կարեմ ըստ պատշաճին
Թուել զիմ փառս, որ նախ էին.
Նման հողմոյ յիս շնչեցին
Ու աներեւոյթ ի բաց անցեալ գնացին։

ԺԸ

Բայց ո՛վ տեսողք իմոյս պատուին,
Լսո՛ղք բանիցս իմ ցաւագին,
Դուք ողբացէ՛ք զիս վշտագին՝
Զցայգ և զցերեկ աներնարին։
Վա՜յ տո՛ւք գլխոյս բոլորովին,

Եղո՜ւկ անձինս ամենևին.
Զայս ո՞վ տեսեալ կամ ո՞ւմ լինին,
Որ պատահեաց թշուառս անձին·
Աւաղեցէ՛ք զիս սաստկագին,
Աշխարեցէ՛ք ողորմագին,
Ածէ՛ք առ իս զտեսողն հին՝
Զերեմիասն Եղկէսացին,
Հանդերձ պարու մարգարէից
Իսրայէլեանն հնոյ ցեղին,
Որք են հմուտ լալոյ բանին,
Զի բնաւ ի սգոյ չդադարեցին։
Եթէ ողբան ըստ պատշաճին
Զահեղ կորուստն իմոյ զարմին,
Ծով զգլուխս առնեն բնաւին,
Զաչուերսն աղբիւր դառն արտասուին,
Սգան ողբովք անհնարին
Զիմ ճանապարհքս, որ սուգ առին,
Աւա՜ղ առեն քեզ, քաղա՛ք հին,
Տո՛ւն և աթո՛ռ Երկնաւորին,
Ընդէ՞ր այդպէս եղեր ստորին՝
Նմանս խղոց մրգապահին,
Պարտէ՛զ ու այգի՛ քակեալ ցանկին
Ի ապականեալ խոզից շամբին։
Փոխան զօրացն հրեղինին՝
Հրեշտակք չարին ի քեզ պարին,
Փոխան ձայնից սրբերգենին՝
Դևք և ոգնիք կաքաւէին,
Փոխան բուրմանցն նարդոսի՝
Աղբք և աւիշք ի քեզ կուտին,

Փոխան սրբոց պաշտօնէին՝
Յուշկապարիկք ի քեզ բնակին,
Փոխան զեղմանց պատարագին՝
Հօրանք այծից ի քեզ բունին։
Ա՜յ վա՜յ, քեզ վա՜յ, որ չվճարին,
Վա՜յ զքո փեսայքն առաչին,
Որ բնաւ ի քեզ այլ չերևին.
Վա՜յ զքո երէցն Արշակունին,
Վա՜յ զքո կրսեր Բագրատունին,
Վա՜յ զքո Սիւնին և զԱրծրունին,
Վա՜յ զՄամիկոնին և զԱղուանին,
Վա՜յ զՇիրական և զՎանանդին,
Վա՜յ զՏարօնեցւն և զԾոփացին։
Վայիւք քանի՜ քեզ հանդիպին,
Մինչ եզր և հատ չկայ քո չարին,
Վայ ի վերայ վայից կուտեն,
Թո՛ղ քեզ անբաւ յաւիտեանին։

ԺԹ

Արդ, ո՛վ դատերք իմ նախածին,
Զորս և առ իս ժողովեցին՝
Սգալ ողբովք անհնարին
Զհայոյտառականքս, որ մեզ հասին.
Ուստա՛ն քաղաք Հայոց Դվի՛ն,
Անի ամո՛ւրդ Շարային,
Սիւնի՛ք ու Աղուա՛նք ընդ Վիրային,
Հինդ Ամարա՛ս Գրիգորիսին,

Շիրի՛մ սրբոյ առաքելոյն
Թադէոսի, որ յԱրտազին,
Հաղբա՛տ, Բջնի՛ն ւ Ամատունի՛ն,
Որ յԱրագած ես յԱներդին,
Բագուա՛ն և Կա՛րս ընդ Բասենին,
Կարի՛ն քաղաք Բարձր Հային,
Վասպուրակա՛ն տունդ Վանին,
Տարօ՛ն, Սասո՛ւնք և Ծոփայի՛ն,
Եւ այլ աշխա՛րհ հայասեռին
Միջագետաց ւ Հոռոմին,
Կիւլիկի՛ա, Կողմ Ստորի՛ն՝
Պատուեալ գլխովքդ մեր նախկին.
Թողո՛ւմք զողբաւքս ցաւագին,
Առնե՛մք աւարտ լալեաց բանին,
Յուսահատիլ չէ պարտ բնաւին,
Մեզ ի յուսոյ Անմահ Բանին,
Որ ի քարեաց անշնչային
Կանգնէ որդիս Աբրահամին.
Այլ պաղատեմ մեզ խիստ ուժգին
Գիրկս արկանել ոտից նորին,
Զցաւդ և զցերեկ կանխել ի ամին,
Զարթնուլ ի քնոյ զբաղակացին.
Միթէ՛ կարճէ զչափ չարին,
Որ մինչ ցայսօր ընդ մեզ ացին,
Առնէ վախճան սգոյս խորին,
Զոր բազմամեայ կրեմք յանձին:
Նա նորոգումն մեզ կրկին,
Որ բնաւ չյիշեմք զփառս առաջին.

Կանգնէ զաթոռ թագաւորին
Եւ զգաւազան պատրիարքին,
Ամենեցուն ըստ իւր կարգին,
Ուղղէ զգահոյս տիրականին.
Նոր զարդարէ փառօքն հին
Եւս առաւել քան զոր էին,
Տայ մեզ գոչել ձայնիւ ուժգին.
«Վերջինս է մեծ, քան զառաջին» :
Եւ մեք ամէնս ի միասին
Տամք գոհութիւն մեր փրկողին՝
Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն,
Փառք և պատիւ Անեղ Բանին,
Յաւէտ ամօք, որ չվճարին,
Այժմ և յանգէտ յաւիտեանին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
ՅԻՇԱՏԱԿ ԲԱՆԻ ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ՈԳՈՂԻՆ

*

Սի՛ւնդ լուսոյ ի սկզբանէ,
Խորա՛ն փառաց կանգնեալ յերկրէ,
Տո՛ւն Աստուծոյ Կաթուղիկէ,
Լուսապսակ հա՛րսն ի յերկրէ,

Ահա՛ քեզ ողբ, դու հառաչէ՛,
Ըստ արժանւոյն, որպես պարտ է
Քոյին ծննդովքս, որ նուաղել է,
Եկեղեցեօքս, որ հնացեալ է ։

*

Տողեալ տաղիւ չափ յանկական՝
Ըստ արհեստին հոմերական
Ստեփաննոսի թշուառական,
Ոգւով մեռեալ և անպիտան,
Համակ կենօք որպէս զանբան,
Հերձեալ ի փուշս յաշխարհական,
Ծնորհաց լքեալ յարփիական,
Գործով լցեալ եղերական։

*

Երկնաքատակ տանն Սիւնի,
Որ ամմարմնոցն է սխրալի,
Բոլոր բնաւից բաղձալի,
Որպէս զդրախտն Ադինայի,
Կացեալ պարէտ բարձր ի դիտի
Գահաւոյխ յայտմ աշխարհի,
Նստեալ յաթոռ մետրապօլտի՝
Պոստոֆրօնտէս Հայոց կոչի։

*

Փութով մեծաւ զմեզ հարկեալ,
Ի յայս հանդէս բանից մղեալ,
Րաբունապետս հոգւով լցեալ,
Անյաղթ հոէտս շնորհօք ծաղկեալ
Եւ բանիբուն մեզ ճանաչեալ,
Յազգաց բազմաց գովաբանեալ,
Որ խաչատուրս է յորջորջեալ,
ՅԱրարատեան տաճէն եկեալ·

*

Արդ պաղատեմ, ո՛վ սուրբ խորան,
Եկեղեցեօքդ Հայաստան,
Ընկա՛լ զիմ բանքս ողբերգական
Որպէս խայրիք նուիրական,
Զոր հիւսեցի դիմատական,
Ի դէմս քո խորհրդական.
Թէպէտ ես գարշ եմ ու անպիտան՝
Բանքդ ի շնորհաց Հոգւոյն ծնան:

*

Նման այրուոյն խերևէշին,
Լումպք բանիս քեզ ընծային,

Կամ չքաւորաց առ խորանին,
Որք մազ միայն ունեւ մատուցին,
Մի՛ անարգեալ ըստ տեսողին
Խոզ համարել պատարագին,
Այլ զիմ ընկա՛լ որպէս ընծին,
Յընդունարան քում խորհրդին:

*

Ողբովք առ Տէրն պաղատէ,
Վասն աշխարհիս այս մեր հայցէ,
Նուաղեալ ազգիս, որ սպառեալ է,
Նորոգութիւն փութով խնդրէ,
Խաղաղութիւն խորին շնորհէ,
Անշարժ յաւէտ, որ չսասանէ,
Ընդ որ և հոգւոյս, որ գերեալ է,
Մաղթեա՛ չթողուլ ի ձեռանէ:

*

Սահման սիրոյն արարչական
Խոր և անհուն անդնդանման,
Տացէ փրկանն ազգիս մարդկան,
Որ և ազինս այս հայկական,
Նաև եղբօր մեր սրբազան՝
Խնդրող բանիս ներչափական,

Ընդ որս և ինձ բաշխէ փշրանս
Ի սեղանոյ իւր որպէս շան։
Եւ նմա փառք միշտ յաւիտեանս՝
Այժմ և յաւէտ և անվախճան։

*

Զտէր Ստեփաննոս, արարող բանիս,
Ցիշեցէք ի Տէր Յիսուս, ամէն։

ՈՂԲ ՎԱՍՆ ԱՒԵՐՄԱՆ ՏԱՆՍ ԱՐԵՒԵԼԵԱՆ

(Ծպտ աճագին աւուրս որ հասաք)

1 Հուաքել — Հին կտակարանի հերոսուհիներից (Մարգարեութիւն Երեմիայի ԼԱ, 15) Հակոբի սիրելի կինը: Ռաքելը ողբում է իր որդիներ Եփրեմի, Մանասեի և Բենիամինի ցեղերի վրա

2 Սադուն — Սադուն Արծրունի, մոնղոլների արշավանքների ժամանակ հռչակված իր տիտանական ուժով և քաջութեամբ, Ապաղա ղանի հոր՝ Հուլավու խանի իշխանութեան օրերին բազմաթիվ քաջութեան գործեր կատարեց պատերազմներում և մենամարտերում:

3 Ապաղա — Հուլավու խանի որդին, կոչվել է նաև Աբաղա էլխան, քիստոնեաների նկատմամբ վարել է մեղմ քաղաքականութիւն, որովհետև ներվել է քրիստոնեա մորից: Ապաղան ամուսնացել է հուլաց կայսր Միքայելի Մարիամ դստեր հետ: Ապաղա խանի թագավորանիստ քաղաքը եղել է Դավրեժը: Նա հատկապես բարեկամական ջերմ կապերի մեջ էր հայոց Սմբատ Օրբելյան իշխանի հետ:

4 **Ջաչերդ բա՛ց, գինչ Դամասկոսի** — այս արտահայտությունը գալիս է ավետարանական պատմություններից, նշանակում է մտքի այնպիսի հանկարծակի լուսավորում, երբ փոխվում են մարդու գաղափարները, զգացմունքները, կաթծիքները։ Այս փոխաբերությունը ծագում է Պողոս առաքյալի տեսիլից. մինչ այդ, վերջինս եղել է հետևառու վարդապետ և դաժանորեն հալածել քրիստոնյաներին։ Դամասկոս գնալիս, այդ տեսիլի պատճառով նա դարձավ քրիստոնեության մարգարե։ Դամասկոսը կոչվում է վայր՝ հոչակավոր Պողոս առաքյալի դարձի։

5 **Խութլու Բուղա** — Սադուն Արծրունու ավագ որդին, 18-րդ դարի վերջերին եղել է հայ-վրացական նշանավոր գործիչ, զորավար (աթաբեկ, ամիրսպասալար)։ Սպանվել է 1293-ին, հայ-վրացական ազգային-ազատագրական շարժումներին գործուն մասնակցություն ունենալու հետևանքով։

6 **Դեմետրե** — վրաց Դավիթ Վահրամովլա թագավորի որդին, մանկությունը անց է կացրել հայոց Տարսայիճ իշխանի տանը և Դավթի մահից հետո Տարսայիճի ջանքերով դարձել է վրաց թագավոր Վայելել է Արղուն ղանի համակրանքը և նրա կողմից նշանակվել նաև հայոց խնամակալ։ Իր դպլակ և Վրաստանի հազարապետ Տարսայիճ Օրբելյան իշխանին Դեմետրե թագավորը նշանակել է Արարատի կուսակալ։ Սպանվել է Արղուն ղանի կողմից, վերջինիս դեմ ծագած ապստամբությանը հարելու կասկածի հետևանքով

7 **Պոօշ** — Խաղբակյան Վասակ իշխանի որդին, քաջ և շինարար իշխան Խաչենի, 1228-ին հաջորդել է Իր հորը։ Նրա անունով Խաղբակյան տոհմը վերանվանվել է Պոոշյան։ Եղել է Հուլավու խանի զորավարներից մեկը։ 13-րդ դարի 30—80-ական թվականներին եղել է քաղաքական ասպարեզի վրա։ Շինարարական նշանավոր կառույցներ է կանգնեցրել Այրիվանքում, Գեղարդում և Թանահատում՝ այդ ամենը հիշատակված է վանքերի համապատասխան արձանագրություններում։

8 **Սիոն** — Հերմոն կոչված շղթայի բարձրավանդակներից մեկն է Երուսաղեմի բարձրագույն և հարավային բլրակը։ «Սիոն» և «Դուստր

Սիոնի» արտահաղտությունները պլաբանությամբ նշանակում են ճըշմարիտ եկեղեցին երկրի վրա և երկնքում։

9 **Մկդեմ** — որդի Հասան Պռոշ իշխանի, մեռել է նախքան 1268 թ․։

10 **Վասակ** — որդի Հասան Պռոշ իշխանի, մեռել է 1268—1273 թթ. միջև։

11 **Ամիր Հասան** — Պռոշ իշխանի որդին։ Հոր մահից հետո՝ 1284 թ. իր եղբոր՝ Պապաքի հետ ժառանգել է նրա իշխանությունը Վախճանվել է 1292-ին։

12 **Տարսայիճ** — իշխանաց իշխան, աթաբեկ Հայաստանի և Վրաստանի, Սյունյաց Լիպարիտ Օրբելյան իշխանի որդին, իր եղբայր Սմբատի հետ նորոգել է Տաթևի վանքը, եղբոր մահից հետո՝ 1273-ին ժառանգել իշխանական աթոռը։ Կինն է եղել Մինա խաթունը Վախճանվել է 1290 թ․։ Տարսայիճը և Մինան Ստեփանոս Օրբելյան պատմիչի ծնողներն են։

13 **Սմբատ** — իշխանաց իշխան, որդի Լիպարիտ Օրբելյան իշխանի, հաջորդել է իր եղբորը՝ Էլիկումին. Իմաստուն և ճարպիկ անձնավորություն, որն իմացել է 5 լեզուներ։ Մանգու խանից ստացել է գերագույն պատվո տախտակ Մի քանի տարի մնացել է Թաթարիայում և մեծ պատիվների արժանացել։ Նորոգել է շատ վանքեր այդ թվում նաև Տաթևը Մեռել է Թավրիզում՝ իշխանությունը թողնելով եղբորը՝ Տարսայիճին Պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հորեղբայրն է, փոքր հասակում որդեգրել է Ստեփանոսին։ 1291-ին կառուցել է Նորավանքը, ուր և գտնվում է նրա դամբարանը

14 **Մոնղոլ ղտն, նաև Մանգու խան** — իշխել է Բաթու և Բաչու խաների ժամանակ, իր մայր Սարխուտանի հետ միասին

15 **Հասան Խաչենցի Ջալալ Դոլի** — Խաչենի մեծ իշխան Վախտանգ Բ Տոնիկի որդին, մայրն է Խորիշահ՝ նշանավոր Զաքարե և Իվանե եղբայրների քույրը։ Հասանի երկու եղբայրներն էլ կոչվում էին Իվանե և Զաքարե Նրա Մինա աղջիկը Ստեփանոս Օրբելյան պատմիչի մայրն էր։ Կառուցել է Գանձասարի տաճարը և իր կնոջ Մամքանի հետ 1248-ին նորոգել թաթարների կողմից ավերված Կեչառիսի վանքը։ 1261-ին նահատակվել է Ղազվին քաղաքում՝ Արղուն ղանի հրամանով։

16 **Հասան Դօփի** — Հասան Բ Դոփյան, իշխան Խաչենի, որդին էր Ղարա Գրիգոր մեծ իշխանի Ամենից շատ սիրում էր հայրենի Ծար գյուղը, որ իբրև արյան գին և քաջության պարգև էր տրված Որդին՝ Գրիգոր Բ Բարին, ամուսնացած էր Տարսայիճ Օրբելյանի դուստր՝ Ասփայի հետ Հասանի կրտսեր եղբայրն էր Տեր-Հովհաննեսը, որը Հաղպատի վանքի իններորդ առաջնորդն էր։

17 **Ստեփանոս** — Օրբելյան կամ Ուռպելյան, Սյունյաց մետրոպոլիտ, պատմիչ, բանաստեղծ։ 1280-ին ընդունել է հոգևոր կոչում, 1285-ին գնացել Կիլիկիա՝ եպիսկոպոս ձեռնադրվելու 1286-ին դարձել է մետրոպոլիտ Սյունյաց Գլխավոր երկասիրությունը խիստ արժեքավոր պատմությունն է՝ «Պատմութիւն նահանգին Սիսական», ունի նաև ուրիշ չափածոներ, որոնցից երկուսը գրված են Խաչատուր Կեչառեցու պատվերով։

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ, ՎԱՐԴԻՆ ԵՒ ՊՈՒԼՊՈՒԼԻՆ ԶՐՈՅՑՔ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՌԵՑԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ

(Ի գնալն վարդին եկեալ պուլպուլին)

1 «Մարմնոյ նաւ» արտահայտությունը գալիս է 5-րդ դարից՝ Մաշտոցյան շարականներից։ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմում համապատասխան արտահայտությունը կա հետևյալ ձևով.

Տարուբերվում է, ցնցվում է հոգիս

Մարմնիս շինվածքով, ինչպես նավակում (ԲԱՆ ԻԵ, Բ) Նույն արտահայտությանը հանդիպում ենք նաև հետագա շրջանի բանաստեղծների մոտ։

ՈՂԲ ԵՒ ՄԱՂԹԱՆՔ Ի ԹԱՂԱՑՈՒՐ ԿԵՂԱՒԵՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ

(Ես եմ կորուսեալ ոչխար)

1 «Կորուսեալ ոչխար» արտահայտությունը գալիս է ավետարանից։

2 «Չունիմ գնալու պաշար

Նեղ ու նուրբ ճանփուն հրեղէն» Այս հատվածում կա ակնարկ մարդկային հոգուն անդրաշխարհում սպասվող դատաստանի վերաբերյալ Հեթանոսական շրջանի կրոնական պատկերացումներում նույնպես կարևոր հարց է հոգու անդրաշխարհ գնալու խնդիրը։ Զրադաշտական կրոնի սրբազան մատյանում «Ավեստայում» գրված է, որ մեռած մարդու հոգին անդրաշխարհում պետք է անցնի Չինվաթ կամրջի վրայով։ Եթե մարդն արդար է Չինվաթ կամուրջը լայնանում է և հնարավորություն է ստեղծվում նրա հոգու անցնելու համար, իսկ եթե մեղավոր է, ապա Չինվաթ կամուրջը մարդու մազից էլ ավելի է նեղանում և մեղավոր հոգին գլորվում է դժոխքի անդունդը։ Խ Կեչառեցու քերթվածում երևում են հնագույն հավատալիքների հետքեր։

3 Երեմիա — Հին կտակարանի չորս մեծամատյան մարգարեներից մեկը։ Գուշակել է Երուսաղեմի գրավումը, որը և կատարվել է Նա տեսել է Երուսաղեմի գրավումը քաղդեացիների կողմից, հրեա ժողովրդի գերեվարումն ու երկրի ավերումը և դրա հետևանքով առաջացած հոգեկան ծանր ապրումներից դարձել է ողբասաց։ Պատմահայր Մովսես Խորենացին «Հայոց պատմության» վերջաբանում հոչակավոր ողբում ակնարկում է Երեմիայի ողբը, երբ գրում է «Զարթի՛ր, Երեմիա, զարթի՛ր և մարգարենալով հանդերձ ողբա այն, ինչ թշվառությունները որ կրեցինք և ինչ դեռ պիտի կրենք»

4 Պետրոս — գլխավոր և նախագահ Քրիստոսի 12 առաքյալների մեջ, երկրի վրա փոխանորդ Քրիստոսի՝ որպես հովիվ հոտի և եկեղեցու գլխավորյալների։ Սա ծագումով Պաղեստինի Բեթսայիրա քաղաքից էր, որին Հովհաննէս Իր ծննդյան անունը էր Սիմոն կամ Շմավոն, Քրիստոսը նրան կոչում է Վեմ։ Հույները վեմը կոչում են Petrus, դրա համար էլ Ավետարանում նա կոչվում է Պետրոս։ Ըստ ավանդապատումի վերջինս Պողոս առաքյալի հետ միասին Ներոն կայսեր առաջ բանավիճել է Սիմոն մոգի հետ և հաղթել նրան։ Ներոնը երկու առաք-

յաղներին էլ դաժանորեն մահապատժի է ենթարկում, Պետրոսին խա չում են, իսկ Պողոսին՝ գլխատում.

ՀՈԳԻՍ ԴԱՏԱԽԱԶ ԼԻՆԻ ՄԱՐՄՆՈՑՍ

1 Փիլիպոս Անապատականին պատկանող ալավոնական գրական ձուշարձանում համապատասխան հատվածը հետևյալն է «Չէ որ դու ես ինձ ուղղում, ինչպես ձիու երասանակ։ Չէ որ քեզնից զատ, ես ոչինչ չեմ գործում, ոչ բարի, ոչ չար....։ Էլ ինչու ես ինձ այդքան նախատում և ինչու ես ինձ պատվազրկում, թե բարիքը և թե չարը քո ցանկությամբ է»։

Այս նույն համեմատությունը Գրիգոր Լուսավորչին վերագրված տեսիլում ունի հետևյալ ձևակերպումը «Պատասխանի ետ մարմինն և ասէ «Զի մեղադիր լինիս ինձ Ես քո տաճար էի, և բնակարան, որպէս փող ի ձեռն արուեստաւորի կամ որպէս երեսնակ ձիոյ ի ձեռն մարդոյ, զի որպէս կամի, այնպէս վարէ զնայ»։

ԹԱՂԱՑՈՒՐ ԿԵՂԱՐԵՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ԿԱՆԱՆՑ

(Կանա նց ազգ, լացէ՛ք ըզձեզ)

1 Կայենա — Նախահայր Ադամի որդին, որը նախանձի պատճառով սպանեց իր հարազատ եղբորը Աբելին։

2 Եզաբել — Տյուրոսի և Սիդոնի Եթբաալա թագավորի դուստրը և Իսրայելի Աքաաբու արքայի կինը։ Աստվածաշնչային կերպարներից է Եղել է կռապաշտության ջերմ ջատագով և կամեցել է այն հաստատել Սամարիայում, կռիվ է մղել Եհովային պաշտողների դեմ և անհնա ոչնչացրել նրանց Եզաբել անունը այլաբանորեն նշանակում է չարակամություն, շռայլություն

3 Հերովդե — Հրեաստանի թագավոր, որը Երուսաղեմ եկած արևելքի մոգերից իմանում է Քրիստոսի ծննդյան մասին, հետապնդում նորածին մանկանը, արդյունքի չհասնելով հրամայում է կոտորել Բեթլե

ղեմ քաղաքի բոլոր մանուկներին՝ 2 տարեկան և դրանից ցած հասակում գտնվող

ՏԱՂ ՈՂԲԱԼԻ ԹԱՂԵԼՈՒԹԵԱՆՆ ԹԱՂԱՑՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿԵՉԱՌԵՑՈՑ

(Ամենայփրկչին կերպին դրոշմեալ պատկերին .)

1 **Գողգոթա** — լեռ, որի գագաթին խաչեցին Քրիստոսին

2 **Ծովսեփ Արեմաթացի** — մեծահարուստ և պարկեշտ մարդ, որի մասին գովեստով են խոսում Մաթեոս և Մարկոս ավետարանիչները Եղել է Քրիստոսի աշակերտներից, վերջինիս մահվանից հետո խընդրում է Պիղատոսին, թույլատրելու Քրիստոսին թաղելու և թաղում է վիմի մեջ, որ փորել էր իր պարտեզում

3 **Պիղատոս** — Պիղատոս Պոնտացին հիշատակվում է չորս ավետարանիչների կողմից և «Գործք Առաքելոցում»։ Պիղատոսը եղել է Հրեաստանի դատավորը, դատավարության ժամանակ Քրիստոսին անմեղ է ճանաչում, սակայն կաշառք վերցնելով և ենթարկվելով չարացած հրեաների կամքին՝ դատապարտում է նրան խաչելության

4 **Ռաբի** — վարդապետ։ Ասված է Քրիստոսի հասմար

ԱՑԻ ՏԱՂ ԾՆՆԴԻ Ի ԹԱՂԱՑՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿԵՉԱՌԵՑՈՑ

(Անընակիղբն մեզ սկիղբն եղեալ, ովսաննայ)

1 **Գաբրիել** — ըստ քրիստոնեական կրոնի գլխավոր հրեշտակներից մեկը Մարիամ Աստվածածնին ավետել է Քրիստոսի ծնունդը

2 **Դատերացն Սիոնի** — տես Սիոն։

3 **Ծորդանան** — գետ, որի մեջ Հովհաննես Մկրտիչը մկրտել է Քրիստոսին

4 **Ղևտական քարողութիւնք** — ղևտական քարոզներ պահպանված Ղևտական գրքում, որը երրորդ գիրքն է հնգամատյանի մեջ և այսպես է կոչվում, որովհետև պարունակում է հատկապես ղևտացիների

քահանաներին և զոհերին վերաբերող օրենքներն ու կանոնները։ Եբրայեցիներն այս գիրքը կոչում են «Օրենք քահանայից»

ԱՅՂ ՏԱՂ ԾՆԸՆԴԻ ԵՒ ՋՐԹՐՀՆԵԱՑ Ի ԹԱՀԱՑՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԷ

(Աւրինեալդ ի կանայս սուրբ կոյս Մարիամ)

1 Մարիամ — Հիսուս Քրիստոսի մայրը

2 Եսայի — ըստ Հին կտակարանի Ամովսի որդին էր, հրեաների չորս մեծ մարգարեներից առաջինը։

3 Բեդղաեեմ — Քրիստոսի ծննդավայրը։

ՅԱՂԵՔՍԱՆԴՐԻ ԳՐՈՑՆ

Ա

ՏԱՂ ՄԵԾԻՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՆ

(Ալ ծեր դառնացեալ հոգի)

1 Նէգդաեիբոս — Ալեքսանդր Մակեդոնացու հայրը ըստ առասպելական զրույցների, եգիպտացի մոգ.

2 Փիլիպոս — Ալեքսանդր Մակեդոնացու հայրը, Մակեդոնիայի հզոր թագավորը, հռչակված բազում պատերազմներում տարած հաղթանակների համար Դավադրաբար սպանվել է 336 ին մ թ ա , 47 տարեկան հասակում

3 Ոլոմպիա — Մակեդոնիայի Փիլիպոս թագավորի կինը, Ալեքսանդր Մակեդոնացու մայրը ծնված մոտավորապես 390-ին մ թ ա ։ Հպարտ, իշխանատենչ, աճիաճգիստ բնավորության տեր Փիլիպոսը և Ոլիմպիան 354-ին մ թ ա ունեցել են նաև մի աղջիկ, որին կոչել են Կլեոպատրա

4 Ամոն կամ Արամազդ — գլխավոր աստված հեթանոսական կրոնում, համապատասխանում է հունական դիցաբանության Զևսին, հռո-

մեական Յուպիտերին Հայկական դիցաբանության մեջ կոչվում է Արմազդ, իսկ զրադաշտական կրոնում Ահուրամազդա։

5 **Սքոնդարիա** — Ալեքսանդր Մակեդոնացի, ապրել է 356—323 մ.թ.ա, Մակեդոնիայի Փիլիպոս թագավորի որդին է։ Փիլիպոսի սպանությունից հետո, 20 տարեկան հասակում դառնում է Մակեդոնիայի թագավոր։ Աշակերտել է հին աշխարհի ճշմարտորագույն փիլիսոփա Արիստոտելին։ Հելլենիստական մշակույթի հիմնադիրն է մեծ հետաքրքրություն է ցուցաբերել տարբեր ժողովուրդների մշակութային արժեքների ձկատմամբ։ Նվաճողական պատերազմներով իրեն է ենթարկել Պարսկաստանը, Բաբելոնը, Եգիպտոսը, որտեղ իր անունով հիմնել է Ալեքսանդրիա քաղաքը Արշավել է Հնդկաստան, Որա մի մասը ավաճելուց հետո վերադարձել է Բաբելոն Հին զրույցներն ասում են, որ նա իրեն համարում էր Արամազդի որդի և հագնում էր պարսկական տարազ։ Հնագույն պատմական աղբյուրները գովերգում են նրա արիությունը, աշխարհաշինությունը, արվեստների, գիտության և միջազգային առևտրի հովանավոր լինելը

6 **Դարեհ** — Դարեհ Գ Կոդոմանոս, Պարսկաստանի Աքեմենյան դինաստիայի վերջին թագավորը. 3 տարբեր ճակատամարտերում պարտվել է Ալեքսանդր Մակեդոնացուց։ Ըստ ավանդության Ալեքսանդրը Դարեհին գտնում է մահմանդի վիճակում, կառքի վրա պառկած Դարեհը խնդրում է Ալեքսանդրին իր ընտանիքին և մորը պահել արքայական վիճակին համապատասխան։ Վերջինս կատարում է այդ խնդրանքը Դարեհի դին թաղում է մեծ շուքով՝ Պերսեպոլիսի գերեզմանատանը և իրեն հռչակում Աքեմենյանների ժառանգորդ

7 **Պովրէս** — Հնդկաստանի միապետներից, թագավորել է Արևմտյան Հնդկաստանում (Փենջաբ) 326 թ մ թ ա պարտվել է Ալեքսանդր Մակեդոնացուց։ Ալեքսանդրի այն հարցին, թե ինչպես կկամենար բանակցել, Պովրեսը պատասխանել է՝ թագավորավայել Ալեքսանդրը բարեկամացել է նրա հետ, հաստատել նրան ոաջա և դարձրել իր միապետության ներկայացուցիչ

8 **Քանդակէ** — Պղնձե քաղաքի առասպելական տիրուհին

9 **Պղինձ քաղաք** — միպական, առասպելական քաղաք։ Պղնձե քաղաքի պատմությունը միջազգային տարածում ունի, շատ սիրված է եղել միջնադարյան Հայաստանում։ Այս պատմությունը պահպանված է

Մաշտոցի անվան մատենադարանի մի շարք գրչագիր մատյաններում՝ Պղնձե քաղաքի անվանը հանդիպում ենք «Սասնա ծռեր» էպոսում։ Վանի մոտ, վարագա դաշտում կա մի ավերակ բնակատեղի, որ տեղացիները կոչել են Պղնձե քաղաք։

10 Հոռքսիևէ — Ռոքսաննան հռչակված էր ողջ Պարսկաստանում որպես առաջնակարգ գեղեցկուհի, դարձել է Ալեքսանդր Մակեդոնացու կինը և հայտարարվել աշխարհակալ տերության թագուհի. Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո ծննդաբերել է փոքրիկ Ալեքսանդրին Ռոքսաննան և իր որդին սպանվել են 309 թ մ թ ա

ԾԱՂԷՋՍԱՆԴՐԻ ԳՐՈՑՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿԵՉԱՌԵՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ

(Փիլիպոս Ըստեալ յաթոռ)

1 Խիկար — Խիկար Խմաստունը ապրել է մ թ ա 5-րդ դարում Ասորեստանի Սեննեքերիմ թագավորի ժամանակ, եղել է նրա ատենադպիրը։ Մեզ է հասել «Պատմութիւն և խրատք Խիկարա իմաստնոյն» երկը, որն ունի միջազգային տարածում։ Խիկարի խրատների ժողովածուի օրինակներ պահպանված են Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերում Խիկար դարձել է նաև հասարակ անուն և նշանակում է իմաստուն՝ այդ իմաստով հաճախ է հանդիպում միջնադարյան մատենագիրների երկերում և ժողովրդական բանահյուսության մեջ։

2 Դավիթ — Իսրայելի թագավոր, հիմնել է Երուսաղեմը մ թ ա 10-րդ դարում։ Հին կտակարանի կարևորագույն դեմքերից է, եղել է բանաստեղծ և մարգարե։

3 Ցոր — Հոբ երանելին Հին կտակարանի ակնառու կերպարներից է։ Եհովայի կողմից ենթարկվել է դաժան փորձությունների հավատի կայունությունը ստուգելու նպատակով. կորցրել է ընտանիքը, երեխաներին, ողջ ունեցվածքը, ենթարկվել մարմնական պատուհասների։ Այս բոլոր հոգեկան և մարմնական ցավերից հետո էլ շարունակել է հավատալ աստծուն։

4 Ելիփազ — Հին կտակարանի կերպարներից է։

6 **Սողոմոն** — Իսրայելի թագավոր, որդին և հաջորդը Դավթի։ Ամուսնացել է Եգիպտոսի թագավորի աղջկա հետ։ Կառուցել է Երուսաղեմի տաճարը։ Հին կտակարանի մի շարք մասեր կապվում են Սողոմոնի անվան հետ (Իմաստության գիրքը, Առակները, Երգ երգոցը)։ Արդի բանասիրությունը այդ երկերի հեղինակության հարցը կասկածի տակ է առնում։ ապացուցված է, օրինակ, որ «Երգ-երգոցը» հրեական ժողովրդական բանահյուսության ստեղծագործություն է։ Սողոմոնի իմաստունությունը մնացել է որպես լեգենդ ողջ Արևելքում։ Կորյուն վարդապետը վկայում է, որ Մաշտոցը Աստվածաշունչը սկսել է թարգմանել Սողոմոնի առակներից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Խաչատուր Կեչառեցին և նրա ստեղծագործությունները 5

Տողեր

1. Ողբ վասն աւերման տանն արևելեան (Ցայս աճագին աւուրս որ հասաք) 17
2. Տաղ գարնան. վարդին և պուլպուլին զրոյցք և պատասխանիք (Ի գնալն վարդին եկեալ պուլպուլին) . . . 21
3. Ողբ և մաղթանք ի խաչատուր Կեչառեցոյ ասացեալ (Ես եմ կորուսեալ ոչխար) 25
4 Խրատ ոգոյ խաչատուր Կեչառեցոյ ասացեալ (Եղբարք, ձեզ խըրատ մի տամ) 29
5. Խաչատուր Կեչառեցոյ ասացեալ ի վերայ սուտ աստղվորիս (Այս կեանքս է յերազ ընդման և խաբող անզերծ լանդիման) 31
6. Խաչատուր Կեչառեցոյ ասացեալ տաղ ոգեշահ և պիտանի (Թէ մարդ ես ու միտ ունիս) . . . 32
7. Հոգիս դատախազ լինի մարմնոյս . . 34
8 Աշխարհս էր ի ծով ընդման 34
9. Ի չորս տարերաց երկրի . . . 35
10. Ատտուած ի վընկայ բանիս 36
11 Խաչատուր Կեչառեցոյ ասացեալ վասն կանանց (Կանա՛նց ազգ, լացէ՛ք ըզձեզ) 37
12 Խաչատո՛ւր, առնել լաւ է 39

13 Եկին ընդ իս հաևց ասին 39
14 Աւա՛ղ, թէ հաևց բաև լինէր 40
15 Տաղ ողբալի խաչելութեաևն Խաչատուր վարդապետի Կեչառեցոյ (Ամենայփրկչին կերպին դրոշմեալ պատկերին) . 41
16 Այլ տաղ ծնընդի ի Խաչատուր վարդապետէ Կեչառեցոյ (Անընսկիզբն մեզ սկիզբն եղեալ, ովսաննայ) 42
17. Այլ տաղ ծնընդի և ջրօրհնեաց ի Խաչատուր վարդապետէ (Աւրհնեալդ ի կանայս աւուրք կոյս Մարիամ) 44 44

Ճաղեքսանդրի գրոցն

Ա Տաղ Մեծին Ալեքսանդրի (Այ ծեր դառնացեալ ոճգի) . 46
Բ ՃԱղեքսանդրի գրոցն Խաչատուր վարդապետի Կեչառեցոյ ասացեալ (Փիլիպոս ընտեալ յաթոռ) . . 65

Հավելված

1. Բարառնութիւններ 70
2 Վասն գալստեան աստուծոյ առ մարդիկ . 76
3 Յեառն Ստեփաննոսի Օրպէլեան, Ողբ ի դիմաց ս Կաթուղիկէին 112

Ցանոթագրութիւններ 114

Литературно-художественное издание
Хачатур Кечареци
СТИХИ

Գրական-դեղարվեստական հրատարակություն

Խաչատուր Կեչառեցի

ՅԱՂԵՐ

Խմբ. վարիչ՝ Ս. Է. Թոփչյան
Խմբագիր՝ Ա. Ս. Քիշոյան
Նկարիչ՝ Ն. Հ. Հակոբյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլումիրյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճռպանյան
Վերատեսող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

ИБ 6327

Հանձնված է շարվածքի 13 10. 87 թ Ստորագրված է տպագրության 15. 03. 88 թ.: Ֆորմատ 70×108$^{1}/_{32}$: Թուղթ տպագր № 1 Տառատեսակ «Նորք»· Տպագրություն բարձր· 5,25 պայմ տպ մամ , 5,67 պայմ ներկ թերթ, 3,9 հրատ. մամ.: Տպաքանակ 20000. Պատվեր 2537 Գինը՝ 70 կոպ

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան 9, Տերյան 91

Издательство «Советакан грох», Ереван-9 ул. Теряна 91

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան 9, Տերյան 91

Полиграфкомбинат им Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм ССР Ереван-9 ул Теряна 91